

24

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

2019

Luys



Lnyu



ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
(2018-2019ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ)

**Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված ՀՀ
կառավարության գործունեության ուսումնասիրություն
(2018-2019թթ. ժամանակահատված)**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԲԻԶՆԵՍ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ	4
ՀՀ կառավարության ծրագիր	4
«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր	5
ՄԱՍ 1. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՔԱՅԼԵՐ	7
«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրով տրված խոստումներ և այդ ուղղությամբ կատարված աշխատանքներ.....	7
ՀՀ կառավարության ծրագրով տրված խոստումներ և այդ ուղղությամբ կատարված աշխատանքներ.....	16
ՄԱՍ 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԸ ԵՎ ԴՐԱ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	20
«Գործարարությամբ զբաղվելը» զեկույց.....	20
Տնտեսական ազատության համաթիվ.....	28
Գլոբալ ձեռնարկատիրության զեկույց	31
Գլոբալ նորարարության համաթիվ.....	34
Գլոբալ մրցունակության զեկույց	36
Այլ զեկույցներ.....	38
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	40
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	41
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ 01.11.2019Թ. ԹԻՎ 07/10693- 2019 ԳՐՈՒԹՅՈՒՆ	41

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ 16.10.2019թ. ԹԻՎ ԳԳ-2260 ԳՐՈՒԹՅՈՒՆ	46
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ	48

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱՄԷ	Արաբական Միացյալ Էմիրություններ
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ
ՏՄՊՊՀ	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախորդ տարի Հայաստանում տեղի ունեցող իշխանափոխության գործընթացն ուղեկցվում էր նաև գործարար և ներդրումային միջավայրին առնչվող խնդիրների սուր քննադատությամբ, մրցակցային արդար միջավայրի, բոլորի համար հավասար տնտեսավարման հնարավորությունների ստեղծման, ներդրումների և տնտեսական աճի խոստումներով: Իշխանության գալուց կարճ ժամանակ անց նոր կառավարությունը հայտարարեց նաև «տնտեսական հեղափոխության» մեկնարկի մասին՝ առանց հստակեցնելու, թե ինչ վերջնարդյունքի մասին է խոսքը:

Հեղափոխական ամբիոններից տրված խոստումները որոշակիորեն իրենց արտացոլումը գտան իշխող ուժի նախընտրական ծրագրում և Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման մեջ: Այդ ծրագրերի իրագործման համար կառավարությունը երկար ժամանակ չի ունեցել, սակայն կարևոր է գնահատել իրականացվող քաղաքականության համապատասխանությունը հայտարարված ուղղություններին և թիրախներին:

Մյուս կողմից՝ չնայած երկրում առկա դրական տեղաշարժերին՝ ակնհայտ է, որ դրանց մի մասը տեղի է ունենում իշխող էլիտաների փոփոխության, քաղաքական կամքի առկայության, ընդհանուր ոգևորության մթնոլորտի և դրական սպասումների շնորհիվ: Այլ հարց է, թե որքան է կառավարության ներդրումն այդ գործընթացներում:

Սույն հետազոտության նպատակը հենց կառավարության և իշխող ուժի գործունեության գնահատումն է՝ վերը նշված ծրագրերով տրված խոստումներին համապատասխանության տեսանկյունից:

Հետազոտության ընթացքում կիրառվել է հիմնականում համեմատական վերլուծության մեթոդը: Օգտագործվել են ՀՀ պաշտոնական աղբյուրների, միջազգային կազմակերպությունների և փորձագիտական շրջանակներից ստացված տվյալներ:

ԲԻԶՆԵՍ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

ՀՀ կառավարության ծրագիր

Գործարար միջավայրի բարելավման նպատակով ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվելիք քայլերը հիմնականում սահմանված են ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» թիվ 65-Ա որոշման 5-րդ բաժնի 5.4 մասում (Գործարար միջավայրը. ներքին շուկաների ազատությունը, արդար մրցակցությունը): Դրանք են.

- Գործարար միջավայրի վրա պետական քաղաքականության ազդեցության գնահատումը կարևորվելու է ինչպես Հայաստանի քաղաքացիների ընկալումների, այնպես էլ միջազգային համեմատականների տեսանկյունից: Այդ պատճառով, տնտեսական քաղաքականության որակի և գործարար միջավայրի վրա դրա ազդեցության գնահատականները դիտարկվելու են միջազգայնորեն ընդունված և ճանաչում ունեցող ընդհանրական ինդեքսների միջոցով: Մասնավորապես, օգտագործվելու են Համաշխարհային տնտեսական ֆորումի **Գլոբալ մրցունակության ինդեքսը և Ներառական զարգացման ինդեքսը, Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի գնահատումը** և այլն:
- **Էլեկտրականության, գազի և ջրի օգտագործման թույլտվությունների** ստացման հարցերին բիզնեսն առնչվում է հատկապես ընդլայնման շրջանում: ... Կարգավորումների հստակեցումը և դրանցով պահանջվող՝ **Ժամանակային և ֆինանսական ծախսերի առավելագույն կրճատումը** պետք է լինի այս ուղղությամբ Կառավարության գերակայություններից մեկը:
- Կարևոր հարց է նաև **շինարարական թույլտվությունների ստացումը**: ... Նշված ընթացիկներին առնչվող կազմակերպությունների և պետական կառույցների **գործառույթների հստակեցումը** լինելու է այս ուղղությամբ Կառավարության հիմնական թիրախներից մեկը:
- Բիզնեսի զարգացման էական խոչընդոտ է այն իրողությունը, որ Հայաստանում անվճարունակության (սնանկացման) վարույթների ճնշող մեծամասնությունն ավարտվում է ձեռնարկությունների լուծարմամբ: Կառավարությունը կարևորում է իրավիճակի շրջադարձային փոփոխությունը, խրախուսելու է այնպիսի օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխությունները, որոնց արդյունքում **անվճարունակության վարույթներում հայտնված կազմակերպություններն ավելի հաճախ պետք է հասնեն ֆինանսական առողջացման և պահպանեն** գործելու հետագա իրավունքը:»

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Գործարար միջավայրի բարելավմանն առնչվող դրույթներ ներկայացված են նաև «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրի «Տնտեսական բարեփոխումների առաջնահերթությունները» բաժնում: Դրանք են.

«1. վերացնելու ենք բիզնես սկսելու, զարգացնելու և լուծարելու բյուրոկրատական բոլոր սահմանափակումները: Կրճատելու ենք լիցենզիաների, թույլտվությունների և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար չհիմնավորված պահանջների քանակը, վճարները և ժամկետները: Կառավարության յուրաքանչյուր որոշում նախքան դրա կիրարկումը անցնելու է «կարգավորման ազդեցության գնահատում»:

2. կրճատելու ենք էլեկտրականության, գազի, ջրի միացման գործընթացների տևողությունը և պահանջվող գործողությունների քանակը՝ դրանց իրականացումը կազմակերպելով «մեկ պատուհանի սկզբունքով»: Սեփականատիրոջ փոփոխության դեպքում էլեկտրականության, գազի, ջրի պայմանագրերի անվանափոխությունն իրականացվելու է ավտոմատ կարգով:

3. քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման ամբողջական ցիկլն իրականացվելու է էլեկտրոնային համակարգի միջոցով՝ բացառելով դիմումատու-պետական ծառայող շփումը:

6. բարենպաստ ներդրումային միջավայր ձևավորելու համար նվազեցնելու ենք շահութահարկի, եկամտային հարկի և շահաբաժինների հարկման գործող դրույքաչափերը: Մասնավորապես՝ շահութահարկի գործող 20% դրույքաչափը իջեցնելու ենք՝ հասցնելով այն 18%-ի, ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների շահաբաժիններն այսուհետ հարկվելու են միասնական 5% դրույքաչափով: 2019 թվականից կսահմանվի եկամտային հարկի համահարթ 23% դրույքաչափ, ապա մինչև 2023 թվականը այն աստիճանաբար կնվազի մինչև 20%:

7. գույքահարկը հաշվարկելու ենք անշարժ գույքի շուկայական արժեքից և անցում ենք կատարելու մեկ անձի սեփականության մեջ գտնվող գույքային միավորների կոնսոլիդացված արժեքի հարկման:

10. հասցեական հարկային քաղաքականությամբ և տարբերակված մոտեցումների կիրառմամբ նպաստելու ենք Երևանից դուրս՝ հատկապես սահմանամերձ գոտիներում գործարար համայնքի կայացմանը: Ներդնելու ենք գոտիական հարկման այնպիսի համակարգ, որի պայմաններում կկիրառվեն ավելացված արժեքի հարկի, հողի հարկի արտոնություններ, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի, ջրի տարբերակված սակագներ:

12. յուրաքանչյուր տնտեսավարողի հնարավորություն ենք տալու մասնակիորեն որոշելու իր կողմից վճարված հարկի ծախսման ուղղությունը: Այսպիսով

արմատավորելու ենք հարկային պարտավորությունները կամավորության սկզբունքով կատարելու պրակտիկան: Հարկային պարտավորությունները բարեխղճորեն կատարող, օրինապահ հարկ վճարողների խրախուսման ճանապարհով ապահովելու ենք բոլոր գործարքների լիարժեք փաստաթղթավորում:

14. մաքսային ոլորտում **«հսկիչ գներից» անցում ենք կատարելու հաշիվ ապրանքագրերով** կամ տվյալ ապրանքի գների մասին համացանցում առկա տեղեկատվության հիման վրա մաքսագերծմանը:

16. մշակելու և ներդնելու ենք **տնտեսական զարգացման սեփական ինդեքսը**: Ապահովելու ենք միջազգային գնահատման վարկանիշային (այդ թվում թվային տնտեսության, թվայնացման, էլեկտրոնային հասարակության) սանդղակներում Հայաստանի դիրքի շարունակական առաջընթացը՝ որպես թիրախ սահմանելով զգալի բարելավում «Գործարարությամբ զբաղվելը», «Գլոբալ մրցունակության» և այլ զեկույցներում:

19. ...**տարեկան մինչև 20 միլիոն դրամ շրջանառություն** ունեցող բիզնեսն **ազատելով հարկերից**՝ խրախուսելու ենք նոր փոքր և միջին բիզնեսի ստեղծումը:»

ՄԱՍ 1. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՔԱՅԼԵՐ

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Թիրախ 1. Վերացնելու ենք բիզնեսի վարման բյուրոկրատական սահմանափակումները, կրճատելու ենք լիցենզիաների, թույլտվությունների քանակն ու ստացման համար պահանջվող ժամկետները:

Թիրախ 2. Կրճատելու ենք էլեկտրականության, գազի, ջրի միացման գործընթացների տևողությունը և պահանջվող գործողությունների քանակը՝ դրանց իրականացումը կազմակերպելով «մեկ պատուհանի սկզբունքով»: Ներդրվելու է քաղաքաշինական թույլտվությունների ստացման էլեկտրոնային համակարգ:

Թիրախ 3. Հարկային քաղաքականությամբ թիրախավորելու ենք գործարարի և ներդրողի համար արդար, ընկալելի և կանխատեսելի միջավայրի ստեղծում և գլոբալ աշխարհում երկրի մրցունակության և ներդրումային գրավչության բարձրացում:

Թիրախ 4. Բարելավելու ենք մաքսային վարչարարությունը:

Թիրախ 5. «Մեկ կանգառ, մեկ պատուհան» կառույցի գործարկմամբ ապահովելու ենք մեկ կետից ներդրողներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը և հանրային ծառայությունների մատուցումը:

ՀՀ կառավարության ծրագիր

Թիրախ 1. Կնվազեցվի շուկաներում կենտրոնացվածության աստիճանը:

Թիրախ 2. Լիցենզավորման և նմանատիպ այլ պահանջները կհասցվեն նվազագույնի:

Թիրախ 3. Կնվազեցվի էլեկտրականության, գազի և ջրի օգտագործման, ինչպես նաև շինարարական թույլտվությունների ծախսատարությունն ու ժամանակատարությունը:

Թիրախ 4. Կբարձրացվի սնանկության գործընթացի արդյունավետությունը:

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրով տրված խոստումներ և այդ ուղղությամբ կատարված աշխատանքներ

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրի 6-րդ՝ «Տնտեսական բարեփոխումների առաջնահերթությունները» բաժնում¹ նախատեսվում է իրականացնել մի շարք քայլեր, որոնցից գործարար միջավայրի վրա ուղղակի ազդեցություն ունեն հետևյալները՝

¹ «Իմ քայլը» դաշինքի 2019թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների նախընտրական ծրագիր, էջ 23-25: <https://civilcontract.am/imgayl>

- վերացնելու ենք բիզնես սկսելու, զարգացնելու և լուծարելու բյուրոկրատական բոլոր սահմանափակումները: Կրճատելու ենք լիցենզիաների, թույլտվությունների և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար չհիմնավորված պահանջների քանակը, վճարները և ժամկետները: Կարգավորումները լինելու են պարզ, հասկանալի և ծառայեցված հանրային շահին: Գործարարների և քաղաքացիների գործունեության կարգավորմանն ուղղված թույլտվությունների տրամադրման համար սահմանելու ենք նվազագույն կարճ ժամկետ: Կառավարության յուրաքանչյուր որոշում նախքան դրա կիրարկումը անցնելու է «կարգավորման ազդեցության գնահատում»:

Բիզնեսի վարման բյուրոկրատական սահմանափակումների վերացմանն ուղղությամբ աշխատանքները կարելի է գնահատել երկու ուղղությամբ՝ կոռուպցիայի վերացման և ինստիտուցիոնալ, այդ թվում՝ իրավական բնույթի խոչընդոտների վերացման: Առաջին ուղղությամբ, իհարկե, առկա է առաջընթաց, որը, սակայն, ինստիտուցիոնալ բնույթ դեռևս չի կրում: Կոռուպցիայի կանխարգելման մարմնի ստեղծման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են, և մինչ այս պահը գրանցված արդյունքը կարելի է համարել քաղաքական կամքի և իրավապահ համակարգի առավել ակտիվ աշխատանքի հետևանքով տարբեր օղակների պաշտոնյաների որոշակի «զսպվածության» հետևանք: Դեռևս վաղ է խոսել ինստիտուցիոնալ մակարդակում կոռուպցիոն խնդիրների լուծման մասին:

Ինչ վերաբերում է իրավական ակտերի բարելավման միջոցով անհարկի վարչարարության հնարավորությունների նեղացմանը՝ որևէ համակարգային, ակնառու փոփոխություն հայտնի չէ: Նույնը վերաբերում է նաև լիցենզիաների, թույլտվությունների և ստացման համար չհիմնավորված պահանջների քանակի, վճարների ու ժամկետների կրճատմանը:

Կարգավորման ազդեցության գնահատման համակարգի ներդրման մասով, որի արդյունավետ իրագործումը կարող է նպաստել նաև վերոհիշյալ ուղղություններով հաջողությունների արձանագրմանը, մեկնարկային փուլում է, և առայժմ հայտնի չէ, թե երբ է այն կյանքի կոչվելու: Ներկայումս ընդունվող իրավական ակտերը ծախսերի և օգուտների վերլուծության չեն ենթարկվում, և հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա դրանց ազդեցությունները կա՛մ չեն գնահատվում, կա՛մ գնահատվում են մակերեսորեն՝ առանց մասնագիտական լուրջ վերլուծության:

- կրճատելու ենք էլեկտրականության, գազի, ջրի միացման գործընթացների տևողությունը և պահանջվող գործողությունների քանակը՝ դրանց իրականացումը կազմակերպելով «մեկ պատուհանի սկզբունքով»: Սեփականատիրոջ փոփոխության դեպքում էլեկտրականության, գազի, ջրի

պայմանագրերի անվանափոխությունն իրականացվելու է ավտոմատ կարգով՝ առանց ավելորդ քաշքշուկի և ժամանակի վատնման:

Նշված ուղղություններով **արդյունքներ դեռևս չեն արձանագրվել**: Ավելին, «Էլեկտրականության միացման» ցուցիչով Հայաստանը հետընթաց է գրանցել Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում՝ նախորդ տարվա 17-րդ տեղից իջնելով 30-րդ տեղ:

- *քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման ամբողջական ցիկլն իրականացվելու է էլեկտրոնային համակարգի միջոցով՝ բացառելով դիմումատու-պետական ծառայող շփումը:*

Քաղաքաշինական թույլտվությունների ստացման էլեկտրոնային համակարգը, որն արդեն մի քանի տարի է, ինչ ներդրվել է Երևանում, ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով չի գործում: Այդ համակարգի արդիականացման աշխատանքներ նախատեսված են ինչպես ՀՀ կառավարության 2019–2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով², այնպես էլ ՀՀ գործարար միջավայրի բարելավման ռազմավարության նախագծով³:

- *հարկային քաղաքականությամբ թիրախավորելու ենք գործարարի և ներդրողի համար արդար, ընկալելի և կանխատեսելի միջավայրի ստեղծում և գլոբալ աշխարհում երկրի մրցունակության և ներդրումային գրավչության բարձրացում:*

Կառավարության իրականացրած հարկային քաղաքականությունն առայժմ մնում է անորոշ: Տնտեսական զարգացման ռազմավարության բացակայության պայմաններում յուրաքանչյուր պետական մարմին հարկային համակարգը պատկերացնում է իր գերատեսչական շահերի տեսանկյունից: Հարկային ոլորտում ուղեցույցի դերի հավակնող՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված «ՀՀ-ում Հարկային բարեփոխումների իրականացման ռազմավարության» նախագիծն ամբողջական և ավարտուն փաստաթուղթ չէ: Այն հանրային քննարկման ներկայացված ձևաչափով չի կարող ծառայել որպես գործարարի և ներդրողի համար արդար, ընկալելի և կանխատեսելի միջավայրի ստեղծող: Փաստաթղթում առկա բազմաթիվ դրույթներ ՀՀ-ում գործող տնտեսավարողների

² ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության 2019–2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-L որոշում, կետ 362.1, 362.2 (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131287>):

³ <https://www.e-draft.am/projects/1992>

ավելի քան 99%-ը կազմող ՓՄՁ սուբյեկտների համար նախատեսում են վատթարացնող պայմաններ⁴:

- բարենպաստ ներդրումային միջավայր ձևավորելու համար նվազեցնելու ենք շահութահարկի, եկամտային հարկի և շահաբաժինների հարկման գործող դրույքաչափերը: Մասնավորապես՝ շահութահարկի գործող 20% դրույքաչափը իջեցնելու ենք՝ հասցնելով այն 18%-ի, ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների շահաբաժիններն այսուհետ հարկվելու են միասնական 5% դրույքաչափով: 2019 թվականից կսահմանվի եկամտային հարկի համահարթ 23% դրույքաչափ, ապա մինչև 2023 թվականը այն աստիճանաբար կնվազի մինչև 20%:

Նշված բոլոր միջոցառումներն իրականացված են: Դրանք ուժի մեջ կմտնեն 2020թ. հունվարի 1-ից: Այնուամենայնիվ, այս առումով կան որոշ խնդիրներ, որոնք ոչ դրական ազդեցություն են թողնում փոքր և միջին բիզնեսի վրա:

Այսպես, թվում է, թե կարևոր փոփոխություն կարելի է համարել 2020 թվականի հունվարի 1-ից շահութահարկի դրույքաչափի իջեցումը 20%-ից 18%, իսկ միջինից բարձր աշխատավարձ վճարողների համար՝ նաև եկամտային հարկի դրույքաչափերի համահարթեցումն ու աստիճանական իջեցումը:

2020թ. հունվարի 1-ից եկամտային հարկի դրույքաչափը կկազմի 23% և տարեկան 1%-ային կետով իջնելով՝ 2023թ. կհասնի մինչև 20%-ի: Չնայած այս հարկատեսակը բիզնեսի հարկ չէ, այնուամենայնիվ Հայաստանում ընդունված գործատու-աշխատող հարաբերությունների բնույթի պայմաններում եկամտային հարկի բեռը կրում է գործատուն:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ գերփոքր և փոքր տնտեսավարողների համար 2020 թվականին որևէ փոփոխություն չի լինելու, քանի որ վերջիններիս աշխատողների եկամուտները այժմ էլ հարկվում են 23%-ով (մինչև 150.000 դրամ եկամտի դեպքում), իսկ հաջորդող տարիներին նախատեսվող իջեցումից ևս որևէ էական ֆինանսական բարելավում չի սպասվում: Որոշակի տնտեսում կարող են ունենալ աշխատողների առավել մեծ թիվ ունեցող միջին ընկերությունները, սակայն նրանց կշիռը ՓՄՁ-ների մեջ շատ փոքր է: Համեմատության համար նշենք, որ 2017 թվականի տվյալներով՝ 59.467 ՓՄՁ-ներից միայն 515-ն է միջին, որոնք ունեն 49.927 վարձու աշխատող, այսինքն՝ միջին հաշվով 97 աշխատող:

Ստացվում է, որ շահութահարկի և եկամտային հարկի դրույքաչափերի իջեցումը նպաստելու է խոշոր ընկերություններին, քանի որ գործող պրոգրեսիվ դրույքաչափի պարագայում 150.000-ից 2.000.000 դրամ աշխատավարձը

⁴ Այս մասին առավել մանրամասն տե՛ս «ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության համեմատական վերլուծություն»:

հարկվում է 28%-ով: Սպասվող խնայողությունն արտաքին շուկաներում մրցակցության տեսանկյունից, իհարկե, դրական է, սակայն տեղական շուկայում ՓՄՁ-ների և խոշորների միջև մրցակցության տեսանկյունից ավելացնում է վերջիններիս առավելությունը:

Այս համատեքստում հարկ է նշել նաև նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ կապված խնդիրը, որը սոցիալական տեսանկյունից թվում է արդարացված, սակայն ՓՄՁ-ների համար պարունակում է ռիսկեր: Տնտեսավարողների, ինչպես նաև բիզնեսի շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկումներից պարզ է դառնում, որ ներկայումս բազմաթիվ տնտեսավարողներ, փաստացի ունենալով վարձու աշխատողներ, նրանց չեն գրանցում: Պատճառը միայն հարկի գումարի չափով տնտեսելը չէ: Իրականում գերփոքր և փոքր տնտեսավարողները հաճախ վճարում են նվազագույն աշխատավարձից ավելի ցածր աշխատավարձ՝ ցածր շահութաբերության պատճառով: Խնդիրն առավել սուր է մարզերում, որտեղ աշխատավարձերն ավելի ցածր են: Այս պայմաններում աշխատողին օրինական դաշտ բերելը շատ տնտեսավարողների համար դառնում է անհնարին:

Կարծում ենք՝ խնդիրն ավելի է սրվելու ՀՀ կառավարության ս.թ. հունիսի 27-ին ընդունած որոշման արդյունքում, որով հավանություն տրված և ՀՀ Ազգային ժողովի կողմից 2019 թվականի նոյեմբերի 19-ին երկրորդ ընթերցմամբ ընդունված «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծին, որով նվազագույն աշխատավարձը 55.000 ՀՀ դրամից բարձրացվում է մինչև 68.000 ՀՀ դրամ:

Թվում է, թե գերփոքր բիզնեսի մի մասը կարող է խուսափել ավելացվող ֆինանսական բեռից՝ 2020 թվականից տեղափոխվելով միկրոձեռնարկատիրության ռեժիմ և վճարելով եկամտային հարկի հաստատուն 5000 դրամ գումարը: Այդպիսով տնտեսավարողը կվճարի ավելի փոքր եկամտային հարկ, սակայն չի ազատվի նվազագույն աշխատավարձի՝ օրենքով սահմանված գումարը վճարելուց, որն ավելի մեծ է, քան ներկայումս է վճարվում: Ստացվում է, որ ՓՄՁ-ների ամենախոցելի խումբը վարձու աշխատող ունենալու դեպքում հայտնվելու է ավելի ծանր վիճակում:

- արդարացի հարկման նպատակով ձեռնարկելու ենք քայլեր հարկային բեռը դեպի «վճարունակ հարկատուներ» տեղափոխելու ուղղությամբ, մասնավորապես՝ գույքահարկը հաշվարկելու ենք անշարժ գույքի շուկայական արժեքից և անցում ենք կատարելու մեկ անձի սեփականության մեջ գտնվող գույքային միավորների կոնսոլիդացված արժեքի հարկման:

Դատելով «ՀՀ-ում հարկային բարեփոխումների իրականացման ռազմավարության» նախագծից՝ առայժմ գույքահարկի բարեփոխման վերջնական մոտեցում առկա չէ: Միաժամանակ առաջին ընթերցմամբ ՀՀ ԱԺ-ն ընդունել է օրենք, որով գույքի կադաստրային արժեքը մոտարկվելու է շուկայականին, սակայն դրան հետևող գույքահարկի դրույքաչափերի փոփոխության տեսլականը հայտնի չէ: Այդ պատճառով ստեղծվել է որոշակի անորոշություն, քանի որ նշված օրենքի կիրառության դեպքում, գործող դրույքաչափերի պարագայում **գույքահարկի գումարն էապես կբարձրանա հասարակության բոլոր սոցիալական խմբերի համար:**

- *հասցեական հարկային քաղաքականությամբ և տարբերակված մոտեցումների կիրառմամբ նպաստելու ենք Երևանից դուրս՝ հատկապես սահմանամերձ գոտիներում գործարար համայնքի կայացմանը: Ներդնելու ենք գոտիական հարկման այնպիսի համակարգ, որի պայմաններում կկիրառվեն ավելացված արժեքի հարկի, հողի հարկի արտոնություններ, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի, ջրի տարբերակված սակագներ, ինչն էլ ՀՀ տարածքում կնպաստի սահմանամերձ համայնքներում աշխատատեղերի ստեղծման կամ շարունակական ավելացման ուղղված հասցեական ներդրումային ծրագրերի իրականացմանը:*

Այս ուղղությամբ միջոցառումներ ոչ միայն չեն իրականացվել, այլև նախատեսված չեն ՀՀ կառավարության ծրագրով:

- *հարկային օրենսգրքի բարելավմամբ սահմանելու ենք ընկալելի և կանխատեսելի հարկային կանոններ, որոնք ներդրումային ծրագրերի, ծախսերի և եկամուտների տնօրինման գործընթացներում նպաստելու են արդյունավետ որոշումների կայացմանը:*

Մինչ այս պահը ՀՀ հարկային օրենսգրքում իրականացված փոփոխությունները որևէ կոնկրետ հայեցակարգի վրա հիմնված չեն եղել և կրել են տարերային բնույթ: 2019թ. հունիսին ընդունված հարկային օրենսգրքի փոփոխությունների փաթեթը, որը հիմնականում մշակվել էր նախորդ կառավարության օրոք, ընդունվեց որոշ կարևոր փոփոխությունների ենթարկվելուց (միկրոձեռնարկատիրության համակարգի ներդրում, շահութահարկի և եկամտային հարկի դրույքաչափերի իջեցում) հետո, սակայն առանց բավարար հիմնավորումների և պատշաճ հանրային քննարկման: Ինչպես կարելի է դատել բիզնես համայնքից ստացվող ազդակներից և «ՀՀ-ում հարկային բարեփոխումների իրականացման ռազմավարության» նախագծից, հարկային օրենսգրքի շահառու պետական և

մասնավոր կողմերը նույնպես ունեն էական դժգոհություններ: Այնուամենայնիվ, **հարկային օրենսդրությունը կանխատեսելի չի կարող համարվել**, քանի որ կառավարությունը նախատեսում է այն բարեփոխել, սակայն այդ փոփոխությունների ուղղություններն առայժմ հստակ չեն:

- մաքսային վարչարարության պարզեցմամբ սահմանելու ենք միջազգային առևտրային հոսքերի գրավիչ պայմաններ: Էլեկտրոնային կամ ազդարարման այլ հարթակների կիրառմամբ գործարար համայնքին մշտապես իրազեկելու ենք բարեփոխումների բովանդակության և Հայաստանի մրցակցային առավելությունների (այդ թվում՝ մարզերում գործունեության իրականացման արդյունությունների) վերաբերյալ: Ներդրումային գրավչության բարձրացման նպատակով հնարավորինս պարզեցնելու ենք մաքսային սահմանի անցման գործընթացը և նվազեցնելու ենք սահմանի անցման համար պահանջվող ժամանակը: Գույքագրելու ենք գործարարների շրջանում մեծ պահանջարկ ունեցող ծառայությունները և դրանց համար սահմանելու ենք մատուցման արագացված ընթացակարգեր:

Մաքսային վարչարարության բարելավման, ներառյալ մաքսային սահմանի անցման ժամկետների կրճատման, ուղղությամբ առայժմ **որևէ կարևոր քայլ չի իրականացվել**: Հարկ է նշել, որ «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի «Արտաքին առևտուր» ցուցիչով Հայաստանը նախորդ տարվա նկատմամբ գրանցել է առաջընթաց՝ 46-րդ տեղից բարձրանալով 43-րդ տեղ: Նախորդ և ընթացիկ տարիների զեկույցների համեմատությունը ցույց է տալիս, որ արտահանման ընթացքում «Սահմանային համապատասխանության վրա ծախսվող ժամանակը» կրճատվել է՝ 39-ից դառնալով 27 ժամ, ինչը թերևս պայմանավորված է էլեկտրոնային մաքսային հայտարարագրման կիրառմամբ: Այդ համակարգի իրավական հիմքերը ստեղծվել էին 2017 թվականին, որի արդյունքները գործնականում երևում են այսօր⁵:

Հաշվի առնելով նույն ցուցիչով Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի 16.1 և ՏՀՀ-ի բարձր եկամուտ ունեցող երկրների 12.7 ժամ արդյունքները՝ կառավարությունն այս ուղղությամբ դեռևս շատ անելիքներ ունի:

⁵ ՀՀ կառավարության 30.03.2017թ. «Էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագրման իրականացման և մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում չունեցող անձանց՝ մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգ մուտք գործելու կարգը սահմանելու մասին» N 546-Ն որոշում:

- մաքսային ոլորտում «հսկիչ գներից» անցում ենք կատարելու հաշիվ ապրանքագրերով կամ տվյալ ապրանքի գների մասին համացանցում առկա տեղեկատվության հիման վրա մաքսազերծմանը:

Նախկինում մաքսային մարմինների կողմից լայնորեն կիրառվող՝ ապրանքների մաքսային արժեքի որոշման պահուստային մեթոդի (որն առավել հայտնի է որպես «հսկիչ գների» մեթոդ) կիրառությունը նկատելիորեն նվազել է: Այժմ հիմնականում կիրառվում է գործարքի գնի մեթոդը, իսկ դրա անհնարին լինելու դեպքում՝ նույն ապրանքների կամ համանման ապրանքների գործարքի գնի մեթոդները: Այս մասով առաջընթացն ակնհայտ է:

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ կիրառվում են «հսկիչ գները»՝ խնդիրները **մնում են չլուծված**: Նախ, դրանք անհասկանալի պատճառներով մնում են գաղտնի, ինչը դժվարացնում է հատկապես այն տնտեսավարողների վիճակը, որոնց ապրանքները ներմուծվում են «ոչ վստահելի երկրներից» (Թուրքիա, ԱՄԷ, Չինաստան և այլն): Եթե տնտեսավարողը համոզված չէ, որ կարող է կիրառել գործարքի գնի մեթոդը, ստացվում է անելանելի իրավիճակ, քանի որ հնարավոր չէ իրականացնել ինքնարժեքի հաշվարկ՝ կապված մաքսային արժեքի որոշման անհնարինության հետ: Բացի այդ, հաճախ «հսկիչ գները» նկատելիորեն շեղված են ՀՀ ներքին շուկայում համանման ապրանքների գներից: Այս դեպքում կա՛մ պետք է դիմել վերադաս մաքսային մարմին՝ «հսկիչ գինը» վերանայելու նպատակով, կա՛մ մաքսազերծումն իրականացնել բարձր գնով:

- բարելավելու ենք Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կարողությունները:

Հանձնաժողովի կարողությունների բարելավման ուղղությամբ առայժմ **քայլեր չեն իրականացվել**:

- «Մեկ կանգառ, մեկ պատուհան» կառույցի գործարկմամբ ապահովելու ենք մեկ կետից ներդրողներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը և հանրային ծառայությունների մատուցումը:

Ներդրողների համար մեկ կետից ծառայությունների մատուցման ուղղությամբ որևէ քայլ չի իրականացվել: Փոխարենը **«Բիզնես Արմենիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2019 թվականի մարտի 29-ի թիվ 24-Ա որոշմամբ դադարեցվել է ՀՀ կառավարության մասնակցությունը «Բիզնես Արմենիա» հիմնադրամում**: Այն իր պաշտոնական ձևակերպումը ստացավ 2019 թվականի հունիսի 7-ին, երբ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում պաշտոնապես գրանցվեցին համապատասխան

փոփոխությունները: Այդպիսով ՀՀ կառավարությունը հրաժարվեց երկար տարիներ ներդրողների աջակցությամբ զբաղվող կառույցից, ինչն իր գործունեության ընթացքում ստեղծել էր գործարար կապեր աշխարհի տարբեր երկրներում գործող նմանատիպ կառույցների հետ, միջազգային փորձագետների աջակցությամբ ձևավորել էր համապատասխան կարողություններ, ձևավորել էր գործընկերային հարաբերություններ տեղական և օտարերկրյա կազմակերպությունների հետ: **Արդյունքում ՀՀ կառավարությունը, «Բիզնես Արմենիա» հիմնադրամի գործունեությունը առավել բարելավելու և արդյունավետ դարձնելու փոխարեն, հրաժարվում է ձևավորված կարողություններից՝ ներդրողներին ու արտահանողներին տևական ժամանակ թողնելով առանց աջակցության:**

Դատելով «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի՝ որպես «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ վերանվանումից⁶ կարելի է ենթադրել, որ հիմնադրամին են փոխանցվելու նաև ներդրողներին ծառայություններ մատուցելու գործառույթներ: Մինչ այժմ, սակայն, որևէ պաշտոնական աղբյուրից տեղեկություն հայտնի չէ հիմնադրամի գործունեության հետագա ուղղությունների, այդ թվում՝ ներդրողների աջակցության գործիքակազմի վերաբերյալ:

- *մշտադիտարկելու ենք ներդրումային ծրագրերը և բացահայտված խնդիրների օպերատիվ լուծմամբ սահմանելու ենք հետններդրումային սպասարկման պատասխանատու վարքագծի և գործընկերային հարաբերությունների բարձր նշաձող:*

Հետններդրումային սպասարկման մասով ևս պատասխանատու էր «Բիզնես Արմենիա» հիմնադրամը, որի գործառույթները, հիմնադրամն անհատույց մասնավորի տնօրինմանը հանձնելուց հետո, որևէ մարմնի այսօր պատվիրակված չեն: Հարկ է նշել, որ «Բիզնես Արմենիայի» բոլոր գործառույթները մնացել են անհասցե, իսկ այդ ապրանքային նշանի⁷ ներքո գործում է մասնավոր կազմակերպություն, որը պետության անունից ներդրողների աջակցություն և սպասարկում չի կարող իրականացնել:

Այսպիսով.

- ՀՀ կառավարությունը բիզնեսի վարման բյուրոկրատական սահմանափակումների վերացման ուղղությամբ որևէ գործուն քայլ չի

⁶ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալի 01.11.2019թ. թիվ 07/10693-2019 գրություն (Հավելված 1):

⁷ Բավական տարօրինակ է ՀՀ կառավարության գործունեությունը, որը ճանաչում ձեռք բերած և օտարերկրյա կառույցների հետ աշխատող կառույցը և նրա ապրանքային նշանը անհատույց տրամադրում է մասնավորի օգտագործմանը՝ դրանով իսկ փոշիացնելով տարիներ շարունակ ներդրված պետական և մասնավոր միջոցները:

իրականացրել, իսկ կարգավորման ազդեցության համակարգը դեռևս մշակման փուլում է:

- Էլեկտրականության, գազի, ջրի ծառայությունների «մեկ պատուհանը» և քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգերը ներդրված չեն:
- Հարկային քաղաքականությունը կանխատեսելի չէ. որևէ իրավական ակտով առայժմ հստակեցված չէ փոփոխությունների հետագա ընթացքը, իսկ իրականացվող փոփոխությունները պատշաճ հանրային քննարկում չեն անցնում:
- Եկամտային հարկի, շահութահարկի և ոչ ռեզիդենտների շահաբաժինների հարկի դրույքաչափերի խոստացված իջեցումն իրականացվել է:
- Հարկման գոտիական համակարգի ներդրում չի պլանավորվում:
- Մաքսային վարչարարությունը բարելավվել է միայն ի հաշիվ կոռուպցիայի նվազման, իսկ ընթացակարգերի բարելավման և «հսկիչ գների» թափանցիկության առումով փոփոխություններ չեն իրականացվել:
- Բիզնեսին ծառայություններ մատուցելու նպատակով «Մեկ կանգառ, մեկ պատուհան» կառույցը չի գործարկվել: Փոխարենն այլևս չի գործում «Բիզնես Արմենիան», որն իրականացնում էր նմանատիպ գործառույթներ:

ՀՀ կառավարության ծրագրով տրված խոստումներ և այդ ուղղությամբ կատարված աշխատանքներ

ՀՀ կառավարության ծրագրի 5.4-րդ՝ «Գործարար միջավայրը. ներքին շուկաների ազատությունը, արդար մրցակցությունը» մասում նախատեսվող միջոցառումներն առավել սահմանափակ են, քան «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրի միջոցառումները: Դրանք, մասնավորապես, ենթադրում են՝

- *շուկաներում կենտրոնացվածության աստիճանի նվազեցում*

Շուկաների կենտրոնացվածության աստիճանի նվազումը և մրցակցության ինտեսիվացումը հասկանալու համար ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովից (ՏՄՊՊՀ) խնդրել էինք տեղեկություններ՝ իր կողմից ուսումնասիրվող շուկաներում մասնակիցների թվի ավելացման, մասնաբաժինների փոփոխության և ապրանքների գների իջեցման դեպքերի վերաբերյալ: Պահանջվող տեղեկությունները ՏՄՊՊՀ-ն, ըստ էության, չի տրամադրել՝ հղում կատարելով իր ինտերնետային կայքում տեղադրված հաշվետվություններին և ծրագրերին, որոնք նման տեղեկություններ չեն

պարունակում⁸: Դատելով տարբեր տարիների հաշվետվություններում ներկայացված տեղեկություններից՝ ՏՄՊՊՀ-ի գործունեությունն առանձնապես փոփոխություն չի կրել, թե՛ իրականացված աշխատանքների, թե՛ արդյունքների մասով:

Հատկանշական է, որ 2017 և 2018թթ. գործունեության ծրագրերում նշվում է խոշոր արտադրող (ներմուծող) ընկերությունների կողմից ապրանքների իրացման, առևտրային ցանցերի գործունեության հետևանքով առաջացող մի շարք մրցակցային խնդիրների և դրանց լուծման անհրաժեշտության մասին, սակայն 2020թ. ծրագրում նման պնդումները բացակայում են: Նշված խնդիրները տնտեսավարողներին հուզող առավել առաջնային հարցերից են, քանի որ տարբեր ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների վարքագիծը չվերահսկվելու պարագայում ազատ շուկայի միջոցով լուծման հասնել հնարավոր չի լինելու: Խնդիրն ավելի արդիական է խոշոր առևտրի կետերի և առևտրային ցանցերի պարագայում, քանի որ վերջիններս ունեն վճռորոշ ազդեցություն որևէ ապրանքի վաճառքի հարցում և ներքին շուկայում վաճառքի համար արտադրված արտադրանքի առաջխաղացումն առաջին հերթին կախված է ոչ թե արտադրողի, այլ այդ առևտրի օբյեկտների (ցանցերի) ցանկությունից:

- Ապրանքների և ծառայությունների շուկաներում գործելու համար պետության կողմից սահմանված ինստիտուցիոնալ կամ այլ տնտեսական արգելքները կամ սահմանափակումները (լիցենզավորման պահանջներ և այլն) կհասցվեն նվազագույնի և կորոշվեն բացառապես այնպիսի սահմաններում, որոնք ունեն կենսական կարևորություն:

Նկարագրված արգելքների կամ սահմանափակումների նվազեցմանը միտված **որևէ համակարգային բարեփոխում առ այսօր չի իրականացվել կամ առաջարկվել:**

- Էլեկտրականության, գազի և ջրի օգտագործման թույլտվությունների ստացման հարցերին բիզնեսն առնչվում է հատկապես ընդլայնման շրջանում: Համապատասխանաբար, զարգացման ծրագրերի առաջխաղացումը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով են կանխատեսելի և կառավարելի այն ռիսկերը, որոնք կապված են այդ ծառայություններից օգտվելու իրավունքների ստացման հետ: Ենթակառուցվածքների հասանելիության սահմանափակումները չպետք է ստեղծեն այնպիսի իրավիճակ, երբ տնտեսավարողների միջև կարող են ստեղծվել անհավասար մրցակցային պայմաններ: Կարգավորումների հստակեցումը և դրանցով պահանջվող՝ ժամանակային և ֆինանսական ծախսերի

⁸ ՏՄՊՊՀ նախագահի 16.10.2019թ. թիվ ԳԳ-2260 գրություն (Հավելված 2):

առավելագույն կրճատումը պետք է լինի այս ուղղությամբ Կառավարության գերակայություններից մեկը:

- Կարևոր հարց է նաև շինարարական թույլտվությունների ստացումը: Արտադրական կամ հասարակական նշանակության կառուցապարման առնչությամբ իրավունքների ստացումը Հայաստանում թեև ծախսատար չէ, սակայն ժամանակատար է և կապված է ընթակարգային զգալի անորոշությունների հետ: Պետական կառույցների կողմից ՀՀ օրենսդրությամբ ամրագրված պարտավորությունների կատարման նկատմամբ ձևական մոտեցումները և արհեստական խոչընդոտների ստեղծումը երկար տարիների ընթացքում ձևավորել են այնպիսի իրավիճակ, որը սահմանված մեխանիզմները դարձրել է էապես անարդյունավետ: Նշված ընթացակարգերին առնչվող կազմակերպությունների և պետական կառույցների գործառույթների հստակեցումը լինելու է այս ուղղությամբ Կառավարության հիմնական թիրախներից մեկը:

Էլեկտրականության, գազի և ջրի օգտագործման թույլտվությունների միացման, և քաղաքաշինական թույլտվությունների ստացման ժամանակային և ֆինանսական ծախսերի կրճատման ուղղությամբ որևէ տեսանելի քայլ չի իրականացվել:

- Բիզնեսի զարգացման էական խոչընդոտ է այն իրողությունը, որ Հայաստանում անվճարունակության (սնանկացման) վարույթների ճնշող մեծամասնությունն ավարտվում է ձեռնարկությունների լուծարմամբ: Կառավարությունը խրախուսելու է այնպիսի օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխությունները, որոնց արդյունքում անվճարունակության վարույթում հայտնված կազմակերպությունները ավելի հաճախ պետք է հասնեն ֆինանսական առողջացման և պահպանեն գործելու հետագա իրավունքը:

Սնանկության գործընթացի արդյունավետության բարձրացման, այդ թվում՝ ֆինանսական առողջացման դեպքերի ավելացման համար հիմքերի ստեղծման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված «Սնանկության մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: Նախագծերի փաթեթը, որի մշակումը սկսվել էր դեռևս նախորդ կառավարության օրոք, իրականում ստեղծում է համակարգային փոփոխությունների հիմք: Կարծում ենք՝ փաթեթի հրատապ ընդունման և արդյունավետ կիրառման դեպքում հնարավոր է հասնել խոստացված «շրջադարձային փոփոխությանը»:

Այսպիսով.

- Շուկաներում կենտրոնացվածության աստիճանի նվազեցմանն ուղղված որևէ էական քայլ չի իրականացվել:
- Լիցենզավորման և նմանատիպ այլ պահանջների կրճատում չի իրականացվել:
- Էլեկտրականության, գազի, ջրի օգտագործման և շինարարական թույլտվությունների ստացման պարզեցված համակարգեր չեն գործարկվել:
- Սնանկության գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված օրենսդրական փաթեթը գտնվում է Ազգային ժողովում:

Ամփոփում

- 2019 թվականի նոյեմբերի դրությամբ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրով և ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներից **իրականացվել է միայն եկամտային հարկի և շահութահարկի դրույքաչափերի իջեցումը:**
- Որոշակի բարելավում է արձանագրվել մաքսային վարչարարության առումով, սակայն **«հսկիչ գների» խնդիրը դեռևս չի լուծվել:**
- Կանխատեսելի հարկային միջավայրի, գոտիական հարկման համակարգի, տնտեսական մրցակցության քաղաքականության բարելավման, թույլտվությունների և լիցենզիաների ստացման հետ կապված ծախսերի կրճատման ուղղություններով **որևէ առաջընթաց չի գրանցվել:**
- **Վերացվել է** բիզնեսին «մեկ պատուհանի» սկզբունքով ծառայություններ մատուցող կառույցը և **փոխարենը չի ստեղծվել խոստացված նորը:**

ՄԱՍ 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԸ ԵՎ ԴՐԱ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Թիրախ 1. Ապահովելու ենք միջազգային գնահատման վարկանիշային (այդ թվում թվային տնտեսության, թվայնացման, էլեկտրոնային հասարակության) սանդղակներում Հայաստանի դիրքի շարունակական առաջընթացը՝ որպես թիրախ սահմանելով զգալի բարելավում «Գործարարությամբ զբաղվելը», «Գլոբալ մրցունակության» և այլ զեկույցներում:

ՀՀ կառավարության ծրագիր

Թիրախ 1. Տնտեսական քաղաքականության որակի և գործարար միջավայրի վրա դրա ազդեցության գնահատականները դիտարկվելու են միջազգայնորեն ընդունված և ճանաչում ունեցող ընդհանրական ինդեքսների միջոցով: Թիրախավորվելու են այն գործոնների բարելավման հարցերը, որոնք կարևորվում են նշված ընդհանրական ինդեքսների գնահատման մեթոդաբանությամբ:

«Իմ քայլը» դաշինքի և ՀՀ կառավարության ծրագրերում հստակ նշվում է, որ կառավարությունը կարևորում է վարկանիշային զեկույցներում Հայաստանի դիրքի առաջխաղացումը: Նախընտրական ծրագրով, մասնավորապես, նշվում է. «մշակելու և ներդնելու ենք տնտեսական զարգացման սեփական ինդեքսը: Ապահովելու ենք միջազգային գնահատման վարկանիշային սանդղակներում Հայաստանի դիրքի շարունակական առաջընթացը՝ որպես թիրախ սահմանելով զգալի բարելավում «Գործարարությամբ զբաղվելը», Գլոբալ մրցունակության և այլ զեկույցներում»:

Հաշվի առնելով այդ հանձնառությունը՝ փորձենք պարզել, թե տարբեր զեկույցներում ինչ դիրք է զբաղեցնում Հայաստանը, որոնք են թույլ և ուժեղ կողմերը, և ինչ քայլեր են կատարվում առաջընթացի ապահովման նպատակով:

«Գործարարությամբ զբաղվելը» զեկույց

2019թ. հոկտեմբերի 24-ին հրապարակված Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը - 2020» զեկույցում⁹ Հայաստանը 190 երկրների շարքում զբաղեցրել է 47-րդ հորիզոնականը: 2018 թվականին Հայաստանի դիրքը 41-րդն էր:

⁹ <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/32436/9781464814402.pdf>

Ձեկույցում երկրի դիրքը որոշվում է գնահատվող 10 ոլորտներում ստացած միավորների հանրագումարի համեմատության հիման վրա: 2019թ. Հայաստանը գրանցել է 74.5 միավոր՝ առավելագույն հնարավոր 100-ից (որը համարվում է գործարար միջավայրի իդեալական վիճակ): Համեմատության համար նշենք, որ 1-ին և 2-րդ հորիզոնականները զբաղեցնող Նոր Զելանդիան և Սինգապուրն ունեն համապատասխանաբար 86.8 և 86.2 միավոր:

Փորձենք հասկանալ, թե ինչն է Հայաստանի հետընթացի պատճառը: Աղյուսակ 1-ից երևում է, որ չնայած հետընթացին՝ Հայաստանի ստացած միավորներն ավելացել են 1.3-ով: Դա, սակայն, հանգեցրել է հետընթացի, քանի որ այլ երկրների համեմատությամբ միավորների առաջընթացը փոքր է եղել:

Հիմնական պատճառը «Փոքր ներդրողների պաշտպանություն» ցուցիչի աննախադեպ հետընթացն է՝ 51-րդ տեղից 120-րդ տեղ: Ստացած միավորներով նահանջը ևս էական է՝ 63.33-ից 42.0: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ մեթոդաբանության փոփոխության հետևանքով 2018թ. ստացած 63.33 միավորը վերագնահատվել և դարձել է 40.0: Մեթոդաբանությունն այլևս նախատեսում է, որ եթե երկրում չկա առնվազն 10 ցուցակավորված մասնավոր ընկերություն ունեցող բորսա, «Փոքր ներդրողների պաշտպանություն» ցուցիչի «Բաժնետերերի կառավարման համաթիվ» բաղադրիչով ստացած միավորները հաշվի չեն առնվում¹⁰: Այդ փոփոխության արդյունքում հաշվի չեն առնվել «Բաժնետերերի իրավունքների համաթիվ», «Սեփականության և վերահսկման համաթիվ» և «Կորպորատիվ թափանցիկության համաթիվ» ենթաբաղադրիչներով ստացած համապատասխանաբար՝ 5, 4 և 5 միավորները:

Դրանք հաշվի առնելու պարագայում «Փոքր ներդրողների պաշտպանություն» ցուցիչով Հայաստանը ներկայիս 42-ի փոխարեն կստանար 70 միավոր, իսկ դիրքը այդ ցուցիչով 120-րդի փոխարեն, այլ հավասար պայմաններում, կլիներ 37-րդը: Երկրի ընդհանուր միավորները կլինեին 77.3՝ ներկայիս 74.5-ի փոխարեն, իսկ դիրքը, մյուս պայմանները նույնությամբ թողնելու դեպքում, կբարձրանար 32-րդ: Սակայն այս հաշվարկը խիստ հարաբերական է, քանի որ մեթոդաբանության չփոփոխման պարագայում միավորների հաշվարկը այլ կլիներ նաև մյուս երկրների պարագայում: Պետք է հաշվի առնել, որ մեզանից բացի կան նաև այլ երկրներ, որոնք սահմանված չափանիշներին համապատասխանող բորսա չունենալու պատճառով ունեցել են միավորների կորուստ: Օրինակ՝ Ադրբեյջանը, Ռուանդան, որոնք Հայաստանից ավելի բարձր դիրքերում են՝ համապատասխանաբար 34-րդ և 38-րդ, ինչպես նաև Կոսովոն, Ղրղզստանը, Տաջիկստանը, Ուրուգվայը, Պարագվայը և այլն:

Ներկայացվող պատկերն արդեն իսկ հուշում է, որ արժեթղթերի շուկայի կայացման ուղղությամբ Հայաստանը պետք է իրականացնի անհապաղ քայլեր, այլապես

¹⁰ Այս բաղադրիչի կշիռը «Փոքր ներդրողների պաշտպանություն» ցուցիչում կազմում է 40%:

կորպորատիվ կառավարման օրենսդրության արդիականացումը կրում է լոկ ձևական բնույթ և տնտեսության վրա իրական ազդեցություն չի ունենում:

Հարկ է նշել նաև, որ մեթոդաբանական փոփոխությունները նորություն չեն, և դրանց արդյունքում Հայաստանն ունեցել է թե՛ հետընթացներ, թե՛ առաջընթաց: Օրինակ՝ սկսած 2016 թվականից «Հարկերի վճարում» ցուցիչով հետվճարումային գործընթացները հաշվի առնելուց հետո Հայաստանն ունեցել է հետընթաց՝ կապված ԱԱՀ-ի վերադարձի բարդ ընթացակարգի և ժամկետների հետ: «Արտաքին առևտուր» ցուցիչով 2015 թվականից սկսած որպես ապրանքների ներկրման երկիր դիտարկվում է հիմնական առևտրային գործընկերը, որը մեր դեպքում Ռուսաստանն է, և առևտուրն իրականացվում է պարզեցված ընթացակարգով: Այդ փոփոխության հաշվին տվյալ տարում գրանցել ենք առաջընթաց: Ասվածի հետևությունն այն է, որ պետք չէ կառչել միայն մեթոդաբանությանը և զեկույցում դիրք ապահովելու համար կենտրոնանալ միայն ուղիղ ազդեցություն ունեցող փոփոխությունների վրա: Անհրաժեշտ է իրականացնել իրական բարեփոխումներ յուրաքանչյուր ուղղությամբ՝ նման անակնկալներից խուսափելու նպատակով¹¹:

«Գործարարությամբ զբաղվելը - 2020» զեկույցում որպես հիմնական բարեփոխումներ արձանագրվել են հետևյալ արդյունքները՝

- «Շինարարական թույլտվություններ» ցուցիչում՝ ճարտարապետների նկատմամբ որակավորման առավել խիստ պահանջների սահմանումը: Խոսքը, թերևս, նախագծային փաստաթղթերը ստուգող ճարտարապետների որակավորման մասին է: Այս մասով համապատասխան օրենքներում և ՀՀ կառավարության որոշումներում փոփոխություններ չեն եղել:
- «Փոքր բաժնետերերի պաշտպանություն» ցուցիչում՝ շահագրգռվածության առկայությամբ խոշոր գործարքի հանգամանքները մինչև գործարքի իրականացումը արտաքին մարմնի կողմից ստուգվելը և անմիջապես այդ մասին հրապարակելը, բաժնետերերի իրավունքներն ու դերը կարևոր որոշումներում մեծացնելը, ինչպես նաև սեփականության և վերահսկման հետ կապված հարցերի հստակեցումները: Այս ուղղությամբ փոփոխությունները կատարվել են 19.04.2019թ. «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-18-Ն օրենքով:
- «Հարկերի վճարում» ցուցիչով՝ ԱԱՀ-ի վերադարձի շրջանակի ընդլայնումը (խոսքը ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի վերադարձի հնարավորության մասին է), որը կիրառվում է դեռևս 2017 թվականի հուլիսից:

¹¹ Ի դեպ, առանց «Փոքր ներդրողների պաշտպանություն» ցուցիչի, այս տարի ևս վերագնահատման արդյունքում ավելացել են Հայաստանի միավորները՝ 1,58 %-ային կետով:

- «Արտաքին առևտուր» ցուցիչով՝ էլեկտրոնային մաքսային հայտարարագրի ներկայացման հնարավորությունը, որը ևս ներդրվել էր 2017 թվականից:

Այս բարեփոխումներով հանդերձ՝ Հայաստանը ունի ամենավատ՝ 120-րդ դիրքը «Փոքր բաժնետերերի պաշտպանություն» ցուցիչով, իսկ «Շինարարական թույլտվությունների ստացումով» 62-րդն է՝ զիջելով միայն Նախորդ ցուցիչին և ավանդաբար խնդրահարույց համարվող «Սնանկության ճանաչմանը» (95-րդ տեղ):

Ի դեպ, վերոհիշյալ 4 բարեփոխումներից 2-ը՝ հարկերի վճարման և արտաքին առևտրի մասով իրականացվել են 2017 թվականին, իսկ բաժնետիրական ընկերությունների մասով՝ 2019-ին՝ հիմքում ունենալով «Հայաստանի 2018թ. Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիրը», որն ընդունվել է 05.05.2018թ.: **Փաստացի ստացվում է, որ Համաշխարհային բանկն արձանագրել է ներկայիս կառավարության օրոք պլանավորված և իրականացված միայն 1 բարեփոխում՝ շինարարական թույլտվությունների մասով, որն իր կարևորությամբ չի պահանջել անգամ օրենքի կամ կառավարության որոշման ընդունում:**

Հայաստանի գրանցած լավագույն արդյունքներն են «Ընկերությունների հիմնումը»՝ 10-րդ տեղ, և «Սեփականության գրանցումը»՝ 13-րդ տեղ: Նշված ցուցիչներով, ինչպես նաև «Վարկերի ստացում» և «Պայմանագրերի կիրարկում» ցուցիչներով բարեփոխումներ չեն արձանագրվել (միավորները չեն փոխվել):

«Սնանկության ճանաչումով» դիրքային փոփոխություն չի եղել, սակայն միավորն ավելացել է 0.6 %-ային կետով, իսկ «Էլեկտրականության միացումն» արձանագրել է դիրքի հետընթաց՝ 17-ից 30, և միավորը նվազել է 3.1 %-ային կետով:

Նախորդ տարվա համեմատ դիրքային փոփոխություններ արձանագրվել են 9 ցուցիչներով, որոնցից միայն 4-ում ենք ունեցել առաջընթաց՝ «Շինարարական թույլտվությունների ստացում»՝ 36, «Հարկերի վճարում»՝ 30, «Արտաքին առևտուր»՝ 3 և «Սեփականության գրանցում»՝ 1 կետով:

Աղյուսակ 1. Հայաստանի դիրքի և միավորների փոփոխությունը՝ ըստ ցուցիչների

	2019թ. Դիրքը զեկույցում	2019թ. Միավոր	2018թ. Միավոր (վերա- նայված)	Միավորի փոփոխու- թյունը	2018թ. Դիրքը զեկույ- ցում	2018թ. Միավոր
ԸՆԴՀԱՆՈՒՐ	47	74.5	73.2	1.3	41	75.37
Ընկերությունների հիմնում	10	96.1	96.1	0	8	96.21
Շինարարական թույլտվությունների ստացում	62	73.1	68.0	5.1	98	68.06
Էլեկտրականության միացում	30	87.7	90.8	-3.1	17	90.79
Սեփականության գրանցում	13	88.6	88.6	0	14	86.97
Վարկերի ստացում	48	70	70.0	0	44	70.0
Փոքր ներդրողների պաշտպանություն	120	42.0	40.0	2	51	63.33
Հարկերի վճարում	52	81.5	74.0	7.5	82	74.46
Արտաքին առևտուր	43	91.7	90.8	0.9	46	89.22
Պայմանագրերի կիրարկում	30	69.7	69.7	0	24	70.63
Մնանկության ճանաչում	95	44.6	44.0	0.6	95	43.99

Աղբյուր՝ Doing Business 2020

Հայաստանում գործարար միջավայրի դյուրինությունը և ներդրումներ ներգրավելու հնարավորությունները հասկանալու համար համեմատենք մեր արդյունքները որոշ տարածաշրջանային, ինչպես նաև բնակչության չափով ու տարածքով համադրելի որոշ երկրների հետ: **Հայաստանը էապես զիջում է հարևան Վրաստանին (դիրքը՝ 7), Լիտվային (11), Էստոնիային (18), Լատվիային (19), ինչպես նաև Ղազախստանին (25), Ռուսաստանին (28), Թուրքիային (33) և Ադրբեջանին (34): Մեզանից հետ են միայն Մոլդովան (48), Բելառուսը (49), Ուկրաինան (64) և Ղրղզստանը (80) (տե՛ս Աղյուսակ 2):**

Աղյուսակ 2. Երկրների ընդհանուր և առանձին ցուցիչներով դիրքը «Գործարարությամբ զբաղվելը - 2020» զեկույցում

	ԴԻՔԸ	Ընկերությունների հիմնում	Շինարարական թույլտվությունների ստացում	Էլեկտրականության միացում	Սեփականության գրանցում	Վարկերի ստացում	Փոքր ներդրողների պաշտպանություն	Հարկերի վճարում	Արտաքին առևտուր	Պայմանագրերի կիրարկում	Սնանկության ճանաչում
Հայաստան	47	10	62	30	13	48	120	52	43	30	95
Բելառուս	49	30	48	20	14	104	79	99	24	40	74
Ղազախստան	25	22	37	67	24	25	7	64	105	4	42
Ղրղզստան	80	42	90	143	7	15	128	117	89	134	78
Ռուսաստան	28	40	26	7	12	25	72	58	99	21	57
Ադրբեջան	34	9	59	80	44	1	105	40	83	28	47
Վրաստան	7	2	21	42	5	15	7	14	45	12	64
Թուրքիա	33	77	53	41	27	37	21	26	44	24	120
Մոլդովա	48	13	156	84	22	48	45	33	38	62	67
Ուկրաինա	64	61	20	128	61	37	45	65	74	63	146
Էստոնիա	18	14	19	53	6	48	79	12	17	8	54
Լատվիա	19	26	56	61	25	15	45	16	28	15	55
Լիտվա	11	34	10	15	4	48	37	18	19	7	89

Աղբյուր՝ Doing Business 2020

Հայաստանը «Փոքր ներդրողների պաշտպանություն» ցուցիչով զիջում է համեմատվող բոլոր երկրներին, բացի Ղրղզստանից, «Սնանկության ճանաչումով»՝ բոլորին, բացի Թուրքիայից և Ուկրաինայից, «Շինարարական թույլտվությունների ստացումով»՝ բոլորին, բացի Ղրղզստանից և Մոլդովայից:

«Հարկերի վճարումով» և «Վարկերի ստացումով» համեմատվող 12 երկրներից Հայաստանը զիջում է 7-ին, «Պայմանագրերի կիրարկումով»՝ 8-ին: Մյուս 4 ցուցանիշներով մեր երկիրն ունի առավել բարենպաստ դիրք:

Այդուհանդերձ, որևէ ցուցիչով Հայաստանն առաջատար չէ: Իր լավագույն 2 ցուցիչներից «Ընկերությունների հիմնումով» (10) զիջում է Վրաստանին (2) և Ադրբեջանին (9), իսկ «Սեփականության գրանցումով» (13)՝ Լիտվային (4), Վրաստանին (5), Էստոնիային (6), Ղրղզստանին (7) և Ռուսաստանին (12):

Ամփոփելով կարելի է փաստել, որ «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի տվյալներով Հայաստանը համեմատվող երկրների շարքում ընդհանուր դիրքով զիջում է 8-ին, առաջ է միայն 4-ից: Առանձին ցուցիչների մասով ոչ միայն առաջատար չէ, այլև 10 ցուցիչից 6-ով զիջում է համեմատվող 12 երկրների կեսից ավելիին: Առավելություն ունեցող երկրների շարքում են կա՛մ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ, կա՛մ անմիջական հարևան երկրները:

Ամփոփում. «Գործարարությամբ զբաղվելը - 2020» զեկույցի արդյունքները թույլ են տալիս անել մի շարք հետևություններ, որոնք ցույց են տալիս ինչպես գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության թերությունները, այնպես էլ հետագա գործողությունների որոշ առաջնահերթություններ.

- **Զեկույցում գնահատվող ժամանակահատվածում՝ 2018թ. մայիսից 2019թ. մայիս, որևէ կարևոր բարեփոխում չի նախաձեռնվել:** Համաշխարհային բանկի գնահատողների թիմի կողմից արձանագրված հիմնական 4 քայլերից 3-ն իրականացվել կամ նախաձեռնվել են նախորդ կառավարության կողմից, իսկ 1-ն իր կարևորությամբ աննշան է:
- **Հայաստանը կորցրել է ներդրումների ներգրավման առումով իր հիմնական կռիվներից մեկը՝ բիզնես վարելու համար դյուրին կարգավորումներ ունեցող երկրի համբավը:** Տարածաշրջանի երկրներից մեզանից առաջ է ոչ միայն Վրաստանը, այլև Ադրբեյջանն ու Թուրքիան: Նշված բոլոր երկրներն ունեն բնական բազմաթիվ առավելություններ (ելք դեպի ծով, ավելի մեծ ներքին շուկա, բնական ռեսուրսներ, ավելի որակյալ և բազմազան ենթակառուցվածքներ և այլն), որոնք նպաստում են ներդրումների ներհոսքին՝ նույնիսկ ոչ շատ բարենպաստ գործարար միջավայրի պայմաններում:
- **Զեկույցում Ռուսաստանի և Ղազախստանի առավել բարձր դիրքերի պարագայում ի չիք է դառնում նաև Հայաստանի՝ որպես ԵԱՏՄ շուկային հեշտ հասանելիություն և բիզնեսի համար ավելի բարենպաստ կարգավորումներ ունեցող երկիր ներկայացնելու հնարավորությունը:**

Առկա չէ որևէ ռազմավարական փաստաթուղթ կամ ծրագիր, որով կնշմարվեն Հայաստանի դիրքն առաջ մղող «հեղափոխական» քայլեր: Միակ հասանելի փաստաթուղթը հանրային քննարկման ներկայացված «Հայաստանի Հանրապետության գործարար միջավայրի բարելավման 2019-2024 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն է¹²: Այն կենտրոնանում է միայն «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի (փաստաթղթի մշակման պահի դրությամբ հայտնի) մեթոդաբանության վրա և ըստ էության չի կարող ապահովել Հայաստանի գործարար մթնոլորտի իրական զարգացում: Ռազմավարության նախագծի մի զգալի մասում փորձ է արվում հիմնավորել, որ

¹² <https://www.e-draft.am/projects/1992>

անհրաժեշտ է կենտրոնանալ հենց վերոհիշյալ զեկույցի վրա՝ խուսափելով միջազգային հեղինակավոր այլ զեկույցներում ՀՀ դիրքը թիրախավորելուց:

Նախ՝ որևէ զեկույցում ՀՀ դիրքի բարելավման թիրախավորումը զուտ այդ իմաստով չի կարող լինել ինքնանպատակ: Զեկույցները կարևոր գործիքներ են երկրների թույլ և ուժեղ կողմերը, ձեռքբերումներն ու բացթողումները մատնանշելու տեսանկյունից և դրանց արդյունքները կարևոր են պետական քաղաքականությունը մշակելիս: Այս հեղինակավոր զեկույցները մեծ ազդեցություն ունեն նաև միջազգային գործարար աշխարհի բիզնես որոշումների կայացման գործում: Սակայն այս ամենով հանդերձ, սա ամենևին չի նշանակում, որ անհրաժեշտ է թիրախավորել զեկույցներում դիրքը: **Մեր համոզմամբ՝ պետք է իրականացվեն անհրաժեշտ և գործուն բարեփոխումներ, իսկ վարկանիշային աղյուսակներում առաջընթացը կլինի կարևոր, սակայն ածանցյալ հետևանք:**

Առավել ևս ճիշտ չէ, երբ գործարար միջավայրի ու ներդրումների ներգրավման համար պատասխանատու նախարարությունը թիրախավորում է արժեքավոր զեկույցներից միայն մեկը՝ անտեսելով Գլոբալ մրցունակության, Գլոբալ ինովացիայի, Գլոբալ նորարարության, Տնտեսական ազատության և երկրի ներդրումային գրավչությունը գնահատող այլ զեկույցները:

Ամփոփելով պետք է փաստել, որ.

- **Նոր կառավարությունն ըստ էության որևէ էական բարեփոխում չի իրականացրել այս մասով:** Եթե մեթոդաբանությունը չփոխվեր, եթե նույնիսկ այլ երկրների մասով մեծ տեղաշարժ զեկույցում չլիներ, ապա նույնիսկ այդ պարագայում Հայաստանը կունենար ընդամենը շատ փոքր բարելավում զեկույցում, այն էլ հիմնականում նախորդ կառավարության ժամանակահատվածում կատարված քայլերի շնորհիվ:
- Չնայած հավակնոտ և «հեղափոխական» հայտարարություններին՝ գործող կառավարությունն արձանագրում է գործարարությամբ զբաղվելու միջազգային հեղինակավոր զեկույցում ՀՀ դիրքի էական հետընթաց:
- Կառավարության մոտեցումը, թե «նախկին կոռումպացված համակարգն այլևս չկա, հետևաբար շուտով Հայաստանում տնտեսական կտրուկ աճ (կամ ինչպես նշվում է՝ «տնտեսական հեղափոխություն») պետք է լինի, հիմնադուրկ է և իրատեսական չէ:
- Զեկույցը և Հայաստանի դիրքը զեկույցում ևս մեկ անգամ ցույց են տալիս որ առանց իրական բարեփոխումների և բիզնես միջավայրի կարգավորումների մասով համադրելի երկրների հետ էական համեմատելի առավելությունների ապահովման՝ ՀՀ-ում հնարավոր չէ ապահովել ո՛չ կտրուկ ներդրումների հոսք, ո՛չ

թոյնքաձև տնտեսական զարգացում, հետևաբար՝ ո՛չ էլ երկրում գործազրկության, աղքատության առկա պատկերի էական բարելավում:

Տնտեսական ազատության համաթիվ

«Freedom House»-ի կողմից հրապարակվող «Տնտեսական ազատության համաթիվ» 2019թ. զեկույցի տվյալներով, որը հիմնված է 2017թ. հունիսից 2018թ. հունիսն ընկած ժամանակահատվածի տվյալների վրա, Հայաստանը 186 երկրների շարքում զբաղեցնում է 47-րդ հորիզոնականը¹³:

Աղյուսակ 3. Երկրների ստացած միավորները «Տնտեսական ազատության համաթիվը - 2019» զեկույցում

	ԴԻՄԺԸ	ՄԻԱՎՈՐԸ	Սեփականության իրավունքներ	Արտադրատնտեսության արդյունավետություն	Կառավարության թափանցիկություն	Հարկային բեռ	Կառավարության ծախսեր	Ֆինսկալ առողջություն	Քիզենսի ազատություն	Աշխատուժի ազատություն	Արժույթային ազատություն	Առևտրի ազատություն	Ներդրումային ազատություն	Ֆինանսական ազատություն
Հայաստան	47	67,7	57,2	46,3	38,6	84,7	79	53	78,3	71,4	77,8	80,8	75	70
Բելառուս	104	57,9	55,2	51,7	37,7	89,4	41,3	85,4	75	75,3	67,0	76,4	30	10
Ղազախստան	59	65,4	59,3	56,1	40,3	93,4	83,7	41	73,9	86,2	70,9	80	50	50
Ղրղզստան	79	62,3	49,9	27,9	27,2	94,1	54,2	78,4	73,4	79,8	74,4	78,6	60	50
Ռուսաստան	98	58,9	52,4	45,1	36,6	89,4	62,3	86,6	78,4	52,5	65,1	77,8	30	30
Ադրբեջան	60	65,4	59,1	53,1	44,7	87,5	59,5	89,4	69,5	63,9	63	74,6	60	60
Վրաստան	16	75,9	65,9	54,6	58,5	87,1	73,6	93,9	85,8	76,6	76,0	88,6	80	70
Թուրքիա	68	64,6	55,8	49,8	41,2	76,4	65,1	92,2	66	49,2	70	79,6	70	60
Մոլդովա	97	59,1	55,2	29,6	25,4	85,4	59,1	92,0	67,0	39,0	73,5	78,0	55	50
Ուկրաինա	147	52,3	43,9	31,5	29,6	81,8	46,9	82,6	66,1	46,7	58,6	75,0	35	30
Էստոնիա	15	76,6	81,5	76,0	73,1	79,9	51,1	99,8	75,3	57,2	79,6	86,0	90	70
Լատվիա	35	70,4	67,3	48,4	35,5	77,0	57,1	96,9	77,5	73,3	81,1	86,0	85	60
Լիտվա	21	74,2	73,6	61,2	47,8	86,4	65,1	97,3	75,2	63,6	84,6	86	80	70

Աղբյուր՝ Economic Freedom Index 2019

Հայաստանը զեկույցում գնահատվող 12 ցուցիչներից ամենացածր միավորն ունի «Կառավարության թափանցիկությունից» (Government Integrity): Ստացած 38.6 միավորով Հայաստանը համեմատվող երկրներից զիջում է Ղազախստանին, Ադրբեջանին, Թուրքիային, Վրաստանին, Էստոնիային և Լիտվային:

¹³ https://www.heritage.org/index/pdf/2019/book/index_2019.pdf

Այս ցուցիչը գնահատում է քաղաքական գործիչների նկատմամբ վստահությունը, կաշառքի և կոռուպցիայի մակարդակը, կառավարության որոշումների թափանցիկությունը, կոռուպցիայի ընկալումը և պետական ծառայության թափանցիկությունը:

Նշված ուղղություններից, թերևս, առաջընթաց կա քաղաքական գործիչների նկատմամբ վստահության առումով, որը հիմնականում պայմանավորված է վարչապետի, այլ ոչ թե ամբողջ կառավարության բարձր վարկանիշով:

Կոռուպցիայի ու կաշառքի երևույթների նվազման ուղղությամբ ևս ակնհայտ է դրական տեղաշարժ, սակայն միայն քրեական պատասխանատվության ենթարկվելու վտանգը չի կարող արմատախիլ անել նման երևույթները: Անհրաժեշտ են պետական ծառայողների կայուն և երկարաժամկետ սոցիալական երաշխիքներ, որոնք առայժմ բացակայում են: Իրականացված քայլերից կարելի է առանձնացնել պետական ծառայողների պարգևավճարների համակարգի փոփոխությունը և որոշ խմբերի (հիմնականում՝ առողջապահության ոլորտի) սոցիալական փաթեթի շահառու դարձնելը, որոնք հեռու են խնդրի լուծում համարվելուց: Նշենք նաև, որ հանրային ծառայության համակարգի բարեփոխումների փաթեթը դեռևս քննարկման փուլում է:

Կառավարության որոշումների թափանցիկության առումով ևս լուրջ փոփոխություններ չենք տեսնում: Միայն կառավարության նիստերի ուղիղ հեռարձակումը կամ ֆեյսբուքյան ուղիղ եթերները չեն կարող որոշումների կայացման թափանցիկության հիմք համարվել: Անհրաժեշտ է մինչև այդ որոշումների ընդունումն իրականացնել **հանրային քննարկում, որը չի իրականացվում նման երկխոսության ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայության** (պետություն-մասնավոր հատված երկխոսության հարթակների չգործելու, իրավական ակտերի ազդեցությունների գնահատման համակարգի բացակայության և այլն) պատճառով: Համոզված ենք, որ միայն բարձր վարկանիշը չի երաշխավորում ճիշտ որոշումների կայացումը՝ ո՛չ կառավարությանը, ո՛չ Ազգային ժողովին:

Պետական ծառայության թափանցիկության մասով ևս ինստիտուցիոնալ մեխանիզմներ չեն ստեղծվել: Տարբեր գերատեսչություններում թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները չեն կարող լինել թափանցիկության երաշխիք: Քաղաքացիական ծառայության համակարգը չի բարեփոխվել, և բազմաթիվ պաշտոններում աշխատում են պայմանագրային հիմունքներով՝ առանց մրցույթի նշանակված անձինք:

Հաջորդ առավել թույլ տեղը Հայաստանի արդարադատության համակարգն է: «Արդարադատության արդյունավետության» ցուցիչով (46.3) Հայաստանը զիջում է բոլոր երկրներին, բացառությամբ Ղրղզստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և Ռուսաստանի:

Դատական համակարգի **բարեփոխումներն առայժմ գործնական փուլ չեն մտել:** «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունվել է ս.թ. հոկտեմբերի 10-ին:

Համեմատվող երկրների մեջ Հայաստանն առավել խոցելի է «Ֆիսկալ առողջություն» ցուցիչով, որը գնահատում է ՀՆԱ-ի նկատմամբ բյուջետային դեֆիցիտի և պետական պարտքի մակարդակները: Համեմատվող երկրներից առաջ անցնելով միայն Ղազախստանից (41)՝ Հայաստանը ստացել է 53 միավոր, որը բավական ցածր է, եթե հաշվի առնենք հաջորդ ամենավատ արդյունքները՝ 78.4 (Ղրղզստան) և 82.6 (Ուկրաինա):

Այս արդյունքի բարելավման հիմնական գրավականները, թերևս ՀՆԱ-ի և բյուջետային մուտքերի ավելացումներն են: Իհարկե, 2 ցուցանիշներով էլ գործող կառավարությունը լավացրել է արդյունքը, սակայն **կտրուկ փոփոխություններ արձանագրելու համար առայժմ վաղ է:** ՀՆԱ-ի արագ տեմպերով աճի համար անհրաժեշտ խոշոր ներդրումները ուշանում են, իսկ բյուջետային մուտքերի արագ աճը պայմանավորված է նաև որոշ ժամանակավոր գործոններով: Նախկինում չմոծված հարկերի հավաքագրումը, ավտոմեքենաների ներկրումը (այս մասով հարկային մուտքերը կտրուկ կնվազեն հաջորդ հարկային տարում) ունեն ժամանակավոր բնույթ, և դրանց վրա հիմնվել միջնաժամկետ հատվածում հնարավոր չէ: Իհարկե, հարկերի հավաքագրմանը նպաստել է նաև հարկային վարչարարության բարելավումը, սակայն դա ավելի շատ քաղաքական փոփոխություններով պայմանավորված խոշոր տնտեսավարողների համար հարկային խաղի կանոնների փոփոխության, քան վարչարարական ճիշտ մեխանիզմների կիրառման հետևանք է:

«Հարկային բեռի» ցուցիչով ևս Հայաստանը մրցունակ չէ՝ 84.7 միավորով զիջում է համեմատվող 12 երկրներից 8-ին:

Այս ուղղությամբ կառավարության իրականացրած քայլերից կարելի է առանձնացնել շահութահարկի և եկամտային հարկի դրույքաչափերի իջեցումը, որոնք դրական կազդեն այս ցուցիչով Հայաստանի դիրքի վրա: Հակառակ դրան՝ ակցիզային հարկի դրույքաչափերի և գույքահարկի նախատեսված բարձրացումները կունենան բացասական ազդեցություն:

Զեկույցում գնահատվող այլ ցուցիչների մասով Հայաստանն ունի համեմատաբար բարենպաստ դիրքեր: Դրանք հիմնականում վերաբերում են բիզնեսի, աշխատուժի, առևտրի, արժութային, ներդրումային և ֆինանսական ազատություններին:

Ամփոփում. Տնտեսական ազատության համաթվի առավել խոցելի ցուցիչներով Հայաստանի դիրքերը կարող են բարելավվել, սակայն իրականացվող

բարեփոխումներն այնքան կտրուկ չեն, որ հնարավոր լինի միանշանակ կանխատեսել էական առաջընթաց: Առաջընթացն ավելի շատ կախված է լինելու այլ երկրներում իրականացվող բարեփոխումների տեմպից:

Գլոբալ ձեռնարկատիրության զեկույց

«Գլոբալ ձեռնարկատիրության զեկույց - 2018»-ի արդյունքներով Հայաստանը 137 երկրների շարքում զբաղեցնում է 88-րդ հորիզոնականը¹⁴: Համեմատվող երկրներից առաջ է անցնում միայն Ղրղզստանից (100) և Մոլդովայից (92)¹⁵՝ զիջելով համեմատվող մյուս 10 երկրներին¹⁵:

Զեկույցը կարևորվում է հատկապես նրանով, որ գնահատում է ձեռնարկատիրությամբ զբաղվելու հնարավորությունները՝ հաշվի առնելով տվյալ երկրի գործարարների «ձեռնարկատիրական որակները» և առկա ինստիտուցիոնալ պայմանները: Հատկանշական է նաև այն, որ որպես ձեռնարկատիրություն դիտարկվում է ոչ թե եկամուտ ստանալուն միտված ցանկացած բիզնես գործունեություն, այլ նորարարական, աշխատատեղեր ստեղծող և բարձր աճին միտված ձեռնարկատիրությունը: Ինքնազբաղվածությունը, պարզունակ առևտրային կամ «կարիքներ բավարարելուն միտված» այլ գործունեությունը զեկույցի տեսանկյունից ձեռնարկատիրություն չի համարվում:

Աղյուսակ 4. Երկրների ստացած միավորները «Գլոբալ ձեռնարկատիրության զեկույց - 2018»-ում

	Հայաստան	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան	Ադրբեջան	Վրաստան	Թուրքիա	Մոլդովա	Ուկրաինա	Էստոնիա	Լատվիա	Լիտվա
ԴԻՐՔԸ	88	64	100	78	62	77	37	92	73	23	44	29
ՄԻԱՎՈՐԸ	22,8	29,7	19,8	25,2	30,5	25,8	44,5	21,2	26,8	54,8	40,5	51,1
Հնարավորությունների ընկալումը	16%	32%	17%	13%	19%	35%	35%	24%	15%	90%	39%	45%
Սկսնակների ունակությունները	31%	44%	24%	47%	19%	26%	82%	27%	73%	80%	71%	57%
Ռիսկի գործոնը	6%	12%	1%	19%	14%	7%	25%	1%	1%	62%	19%	33%
Հաղորդակցման հնարավորությունները	25%	53%	16%	55%	19%	16%	32%	18%	34%	49%	36%	39%
Մշակույթի աջակցությունը	22%	22%	18%	16%	20%	59%	34%	19%	18%	56%	39%	49%
Հնարավորությունների ազդեցությունը	20%	37%	29%	22%	23%	21%	36%	28%	24%	64%	64%	55%
Տեխնոլոգիաների յուրացումը	29%	12%	17%	27%	41%	31%	47%	35%	38%	77%	47%	55%

¹⁴ «The Global Entrepreneurship index»-ը հրապարակվում է Վաշինգտոնում գործող «Global Entrepreneurship and Development Institute»-ի կողմից: <https://thegei.org/2018-global-entrepreneurship-index/>

¹⁵ Բելառուսը զեկույցում ներառված չէ:

	Հայաստան	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան	Ադրբեջան	Վրաստան	Թուրքիա	Մոլդովա	Ուկրաինա	Էստոնիա	Լատվիա	Լիտվա
Մարդկային կապիտալը	59%	76%	75%	68%	56%	57%	34%	35%	46%	54%	44%	75%
Մրցակցությունը	24%	24%	18%	20%	25%	21%	30%	12%	14%	61%	37%	31%
Նորարարական արտադրանքը	23%	23%	15%	16%	84%	23%	100%	28%	25%	72%	50%	71%
Պրոցեսների նորարարությունը	13%	17%	10%	36%	16%	13%	42%	19%	35%	65%	22%	50%
Բարձր տեմպով աճը	38%	53%	41%	36%	72%	36%	85%	35%	41%	67%	61%	64%
Միջազգայնացումը	27%	23%	14%	5%	44%	45%	40%	25%	36%	66%	55%	74%
Ռիսկային կապիտալը	12%	31%	17%	19%	19%	14%	80%	26%	54%	21%	31%	64%

Աղբյուր՝ Global Entrepreneurship Index 2018

Հայաստանը զբնկույցի 14 ցուցիչներից լավագույն արդյունքները գրանցել է «Մարդկային կապիտալ», «Բարձր տեմպով աճ» և «Սկսնակների ունակություններ» ցուցիչներով: «Մարդկային կապիտալով», որը գնահատում է կրթվածության մակարդակը, աշխատուժի վերապատրաստումն ու աշխատաշուկայի կարգավորումները, Հայաստանը զիջում է Լիտվային, Ղազախստանին, Ղրղզստանին և Ռուսաստանին: Արագ աճի նախապայմանների առումով Հայաստանը զիջում է բոլոր երկրներին՝ փոքր-ինչ հետ թողնելով միայն Մոլդովային, Վրաստանին և Ռուսաստանին:

Այս ցուցիչը ենթադրում է բիզնեսի կողմից արագ աճի թիրախի սահմանում և դրան հասնելու իրագործելի ռազմավարության առկայություն: Պետությունից ակնկալվող հիմնական անելիքը ֆինանսների հասանելիության մեխանիզմների, հատկապես՝ բաժնեդրական շուկայի կայացումն է: Այս ուղղությամբ կառավարությունն առայժմ քայլեր չի իրականացրել, սակայն ս.թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ կառավարության նիստում ՀՀ վարչապետի ելույթից պարզ է դառնում, որ նախատեսվում է՝ որպես առաջին քայլ, բորսայում վաճառքի հանել որոշ պետական ընկերությունների բաժնեգրություններ:

Հայաստանում, ինչպես և համեմատվող բոլոր երկրներում, բացառությամբ Էստոնիայի, Լիտվայի և Ռուսաստանի, ամենաթույլ կողմը «Ռիսկի գործոնն» է: Այն չափում է ռիսկի գնալու գործարարների հակվածությունը, ինչպես նաև գործարար միջավայրի ռիսկային լինելը:

Այսպես պետությունն անելիքներ ունի. բիզնեսի ունակությունների բարելավումը, ծախողումների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը, ինչպես նաև կանխատեսելի գործարար միջավայրի ստեղծումն ու լուծարային գործընթացների բարելավումը պետք է լինեն առաջնահերթություններ:

ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրով նախատեսվում է ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանն ուղղված կրթական ծրագրի մշակում, սակայն ծրագրի բովանդակությունը դեռևս հայտնի չէ: Գործարար միջավայրն առայժմ կանխատեսելի չէ՝ իրականացված փոփոխությունները չեն եղել մասնակցային, իսկ սպասվող փոփոխությունների բովանդակությունը հայտնի չէ: Սնանկության գործընթացների բարելավումը, ինչպես արդեն նշել ենք, օրենսդրական նախաձեռնության փուլում է, և դրա ներդրումը պահանջելու է երկար ժամանակ:

Հաջորդ խոցելի ցուցանիշը «Ռիսկային կապիտալ» է: Այս ցուցանիշով Հայաստանը զիջում է համեմատվող բոլոր երկրներին:

Նշենք, որ ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրով նախատեսվում է իրականացնել միջոցառումներ՝ ներդրումային ֆոնդերի, քրաուդֆանդինգի և «բիզնես հրեշտակների» օրենսդրության կայացման, վենչուրային հիմնադրամների ակտիվացման և ֆիզիկական անձանց դրամական փոխանցումները ներդրումների տրանսֆորմացիայի մեխանիզմների ստեղծման ուղղությամբ: Միջոցառումներն առայժմ կառավարության կողմից հաստատված չեն:

«Պրոցեսների նորարարությամբ», որը բնութագրում է բիզնեսի կողմից նորարարական տեխնոլոգիաների կիրառումը, բնական գիտությունների և ինժեներական ոլորտների բարձր որակավորված մասնագետների հասանելիությունը, Հայաստանն առաջ է անցնում միայն Ղրղզստանից:

Նորարարական տեխնոլոգիաների ներդրումը խրախուսող ծրագրերը գյուղատնտեսության ոլորտում են. «խելացի անասնազոմների» և ինտենսիվ այգիների հիմնման համար տրամադրվում է համաֆինանսավորում և վարկի տոկոսի սուբսիդավորում: Այլ մասշտաբային ծրագրեր հայտնի չեն:

Ամփոփում. «Գլոբալ ձեռնարկատիրության զեկույցի» արդյունքները ցույց են տալիս, որ անհրաժեշտ է պետության էական միջամտություն՝ Հայաստանի դիրքերը բարելավելու ուղղությամբ: Չնայած զեկույցի արդյունքները հիմնված են ինչպես պետության կողմից անհրաժեշտ միջավայրի ապահովման, այնպես էլ ձեռնարկատերերի անձնական որակների ու ունակությունների գնահատման վրա, առավել կարևոր է պետության դերը: Ինչպես ցույց է տալիս Հավելված 3-ում բերված գծագիրը՝ բարձր արդյունքներ գրանցած երկրների ինստիտուտները ստացել են ավելի բարձր գնահատական, քան ձեռնարկատերերը, մինչդեռ Հայաստանի հետ համադրելի երկրները, բացառությամբ Ռուսաստանի, ունեն ճիշտ հակառակ պատկերը:

Կառավարությունը հիմնականում խրախուսում է ինքնազբաղվածությունը, որը բարձր արտադրողական, նորարարական չէ և առավելապես լուծում է սոցիալական խնդիրներ:

Կարծում ենք՝ իրականացված միջոցառումները բավարար չեն կտրուկ առաջընթացի համար: Այսպես.

- Բաժնետիրական շուկայի կայացման, ֆինանսների հասանելիության և գործարարների (այդ թվում՝ ապագա գործարարների) կրթության ծրագրերի մասով առայժմ գտնվում ենք պլանավորման փուլում և տեսլականը հստակ չէ:
- Գործարար միջավայրի միջնաժամկետ հեռանկարը ևս հստակ չէ:
- Նորարարական տեխնոլոգիաների ներդրումն աջակցող ծրագրերը միայն գյուղատնտեսության ոլորտում են:
- Սնանկության գործընթացների բարելավմանը առաջիկայում հնարավոր է հասնել, եթե Ազգային ժողովն անհապաղ ընդունի օրենսդրական փաթեթը, իսկ կառավարությունը հետևողականորեն իրականացնի նախատեսվող փոփոխությունները:

Գլոբալ նորարարության համաթիվ

«Գլոբալ նորարարության համաթիվ - 2019»-ում Հայաստանը 129 երկրների շարքում զբաղեցրել է 64-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա համեմատ դիրքը բարելավելով 4 հորիզոնականով¹⁶: Այդ արդյունքով Հայաստանն առաջ է անցնում միայն Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից և Ադրբեջանից՝ զիջելով համեմատվող մյուս 8 երկրներին:

Աղյուսակ 5. Երկրների ստացած միավորները «Գլոբալ նորարարության համաթիվ - 2019» զեկույցում

	ԴԻՎԻԴ	ՄԻԱՎՈՐԸ	Ինտսիտուները	Մարդկային կապիտալը	Ենթակառուցվածքները	Շուկայի զարգացածությունը	Բիզնեսի զարգացածությունը	Գիտության և տեխնոլոգիայի արդյունքները	Ստեղծագործ արդյունքները
Հայաստան	64	33,98	63,2	16,9	40,2	50,1	26,3	25	32,2
Բելառուս	72	32,07	57,7	41,6	48,2	50	32,6	25,5	10,8
Ղազախստան	79	31,03	68,3	29,8	46,1	46,3	28,1	18,2	18,4
Ղրղզստան	90	28,38	54,6	31,7	38,8	55,6	26,7	17,3	13,3
Ռուսաստան	46	37,62	60,9	48,3	47,1	49,4	40	27,1	25,1
Ադրբեջան	84	30,21	64,5	17	45,3	56,5	24,5	14,9	22,8
Վրաստան	48	36,98	74,3	30,5	44,7	62,1	29,5	22,5	29,1
Թուրքիա	49	36,95	57,4	36,3	52,2	50,8	29,5	23	34,2
Մոլդովա	58	35,52	58,4	30,4	39,4	49,5	26,1	28,7	31,8

¹⁶ https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2019.pdf

	ԴԻՋԻԹ	ՄԻԱՎՈՐ	Ինստիտուտները	Մարդկային կապիտալը	Ենթակառուցվածքները	Շուկայի զարգացածությունը	Բիզնեսի զարգացածությունը	Գիտության և տեխնոլոգիայի արդյունքները	Ստեղծագործ արդյունքները
Ուկրաինա	47	37,4	53,9	35,6	36	43,3	34,8	34,6	33,5
Էստոնիա	24	49,97	81,7	42,1	61,5	52,6	42,6	36	51,7
Լատվիա	34	43,23	77,2	36,9	50,5	54,4	37,4	27,5	42,8
Լիտվա	38	41,46	76	36,3	51,7	50,9	38	24,4	40,3

Աղբյուր՝ Global Innovation Index 2019

Անդրադառնալով զեկույցի ցուցիչներին և դրանց առանձին բաղադրիչներին՝ նշենք առավել թույլ տեղերը: Չնայած «Ինստիտուտներ» ցուցիչով Հայաստանն ունի միջին դիրք, դրա բաղադրիչներից «Գործարար միջավայրով»¹⁷ առաջ է անցնում միայն Թուրքիայից և Ուկրաինայից:

«Մարդկային կապիտալով» Հայաստանը զիջում է համեմատվող բոլոր երկրներին: Այս ցուցիչի շրջանակներում առավել խոցելի է հետազոտությունների բաղադրիչը, ինչպես նաև կրթության վրա կատարվող ծախսերը, բնական գիտությունների և ինժեներական մասնագիտությունների շրջանավարտների տոկոսը:

Այս համադրեքստում կարևոր է կրթության և գիտության ֆինանսավորման մակարդակի կտրուկ աճը, ինչն առայժմ կառավարությունը չի նախատեսել: Նույնը կարելի է ասել նաև ինժեներական և գիտական մասնագիտությունների գծով բուհերի կարողությունների կտրուկ զարգացման և ուսանողներին այդ ոլորտներ ուղղորդելու քաղաքականության մասին:

«Ենթակառուցվածքներ» ցուցիչով առավել խոցելի են «Էլեկտրոնային մասնակցություն» և «Կառավարության առցանց ծառայություններ» ենթաբաղադրիչները: Այդ պատճառով «Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ» բաղադրիչով Հայաստանը զիջում է բոլոր երկրներին՝ բացառությամբ Ղրղզստանի և Ուկրաինայի:

Նույն ցուցիչով ցածր է նաև «Ընդհանուր ենթակառուցվածքներ» բաղադրիչի միավորը, որով առաջ ենք միայն Լիտվայից, Ուկրաինայից և Մոլդովայից:

Ենթակառուցվածքների զարգացման առումով կառավարությունը հատկապես շեշտադրել է ճանապարհաշինությունը: Իրականացվող շինարարության տեմպը,

¹⁷ Այս բաղադրիչը գնահատվում է՝ հիմք ընդունելով «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի տարբեր ցուցիչների արդյունքները:

ինչպես նաև 2020թ. այդ մասով բյուջեի կրկնապատկումը հիմք են տալիս ենթադրելու, որ այդ մասով հնարավոր է առաջիկայում արձանագրել էական բարելավում:

Ինչ վերաբերում է կառավարության կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցմանը, դրանք որևէ էական առաջընթաց չեն ունեցել: Բիզնեսի գրանցման, թույլտվությունների և լիցենզիաների ստացման, համապատասխանության հավաստման, ոստիկանության, առողջապահության և բազմաթիվ այլ ոլորտների ծառայություններ չեն էլեկտրոնայնացվել, և առաջիկա անելիքները հայտնի չեն:

Հայաստանը հետ է մնում նաև «Գիտելիքի կլանում» ենթաբաղադրիչով, որի հիմնական պատճառը մտավոր սեփականության պաշտպանված չլինելն է, բարձր տեխնոլոգիաների և SCS ծառայությունների ներմուծման պակասը:

Այս ուղղություններով առաջընթաց ապահովող՝ կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումներ հայտնի չեն:

Ամփոփում. Չնայած նորարարական տնտեսություն կառուցելու հայտարարված քաղաքականությանը՝ առայժմ Հայաստանի թույլ տեղերի բարելավման ուղղությամբ ակնառու քայլեր չեն իրականացվում: Նորարարության մակարդակը գնահատող հիմնական զեկույցի արդյունքներով Հայաստանին անհրաժեշտ է կտրուկ բարելավել կրթության և գիտության ֆինանսավորումը, խրախուսել բնական գիտությունների և ինժեներական մասնագիտությունների գծով բարձրագույն կրթության ստացումը, քայլեր ձեռնարկել «էլեկտրոնային հասարակության» ստեղծման և պետության կողմից մատուցվող ծառայությունների էլեկտրոնայնացման ուղղությամբ, նպաստել բարձր տեխնոլոգիական ապրանքների և SCS ծառայությունների ներմուծմանը, բարելավել գործարար միջավայրը:

Կրթության ծախսերը նախատեսվում է հաջորդ տարվա համար ավելացնել 15%-ով, ինչը առաջընթաց է, սակայն ոչ հեղափոխական: Թվայնացման, էլեկտրոնային ծառայությունների մատուցման ուղղությամբ ծրագրերը հայտնի չեն, սակայն փոխարենը լուծարվել է «Թվային Հայաստան» հիմնադրամը: Նշված մյուս ուղղություններով ևս ծրագրերը հստակ չեն:

Գլոբալ մրցունակության զեկույց

«Գլոբալ մրցակցության զեկույց - 2019»-ի տվյալներով Հայաստանը 141 երկրների շարքում զբաղեցնում է 69-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա դրությամբ 1 կետով բարելավելով դիրքը¹⁸: Համեմատվող երկրների շարքում Հայաստանն առաջ է միայն Ղրղզստանից, Վրաստանից, Մոլդովայից և Ուկրաինայից՝ զիջելով մյուս 7 երկրներին¹⁹:

¹⁸ http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf

¹⁹ Բեյառուր զեկույցում ներառված չէ:

Աղյուսակ 6. Երկրների ստացած միավորները «Գլոբալ մրցունակության զեկույց - 2019»-ում

	Հայաստան	Ղազախստան	Դրոգստան	Ռուսաստան	Ադրբեջան	Վրաստան	Թուրքիա	Մոլդովա	Ուկրաինա	Էստոնիա	Լատվիա	Լիտվա
ԴԻՐՔԸ	69	55	96	43	58	74	61	86	85	31	41	39
ՄԻԱՎՈՐԸ	61.3	62.9	54.0	66.7	62.7	60.6	62.1	56.7	57.0	70.9	67.0	68.4
Ինստիտուտները	56,2	55,6	49.0	52.6	58.5	61.0	53.9	51.4	47.9	70.2	59.3	63.3
Էլեկտրոնային մասնակցությունը	56,7	83,7	68.5	92.1	68.0	62.4	86.0	86.0	68.5	91.0	68.5	80.3
Կառավարության ապագայի կողմնորոշումը	54,9	55.1	37.1	54.7	55.3	51.7	57.2	44.2	48.7	67.2	59.0	62.1
Ենթակառուցվածքները	69,4	68,3	55.8	73.8	77.4	67.6	74.3	66.2	70.3	75.8	76.0	77.0
S&S կիրառությունը	62	68	58.8	77.0	55.1	63.7	57.8	66.8	51.9	78.8	79.7	81.5
Մակրոտնտեսական կայունությունը	75	86,2	75.0	90.0	70.0	74.4	61.3	73.4	57.9	100.0	100.0	100.0
Առողջապահությունը	80,7	71	73.3	69.2	68.9	74.4	87.1	71.9	65.6	84.5	76.8	76.0
Աարանքային շուկան	59,1	55,7	48.0	52.9	64.3	58.4	54.1	55.0	56.5	62.0	58.6	56.3
Աշխատանքի շուկան	66,4	67,8	58.4	61.0	69.4	65.3	52.9	61.9	61.4	70.2	67.3	68.8
Ֆինանսական համակարգը	60,2	53,1	50.0	55.7	55.4	56.2	61.2	46.8	42.3	65.2	57.1	58.3
Շուկայի չափը	37,5	63,4	36.3	84.2	54.0	41.6	79.0	36.1	63.0	42.8	44.4	50.5
Քիզնեսի շարժունությունը	62,5	66,6	58.6	63.1	71.5	62.2	58.8	60.1	57.2	69.9	65.9	65.6
Նորարարության կարողությունը	39,4	32	26.2	52.9	38.3	32.7	44.5	29.9	40.1	52.1	42.4	47.1

Աղբյուրը՝ Global Competitiveness Index 2019

Անդրադառնալով գործարար միջավայրի վրա կարճաժամկետում ուղղակի ազդեցություն ունեցող խոցելի ցուցիչների վրա՝ նշենք հետևյալները.

Չնայած «Ինստիտուտներ» ցուցիչով Հայաստանը համեմատվող երկրների շարքում զբաղեցնում է միջինից բարձր դիրք՝ դրա ենթաբաղադրիչներից **«Էլեկտրոնային մասնակցությամբ» (E-participation) զիջում է համեմատվող բոլոր երկրներին:** Այս ուղղությամբ առկա թերություններին անդրադարձել ենք նաև նախորդ զեկույցի շրջանակներում. ոլորտի զարգացմանն ուղղված կառույցի լուծարում և առաջիկա զարգացումների վերաբերյալ նոր քննարկումների մեկնարկ:

Նույն ցուցիչի մեկ այլ՝ «Կառավարության ապագայի կողմնորոշումը» (Future orientation of Government) բաղադրիչով Հայաստանը զիջում է Ղազախստանին, Թուրքիային, Ադրբեջանին, Էստոնիային, Լատվիային և Լիտվային: Այս ցուցիչով հիմնական «թույլ

տեղերն» են բնապահպանական և էներգախնայողությանը միտված կարգավորումները, իսկ «Կառավարության երկարաժամկետ տեսլականը» և «Կառավարության քաղաքականության կայունությունը» ենթաբաղադրիչներով Հայաստանը դրական իմաստով աչքի չի ընկնում:

«Բիզնեսի շարժունություն» (Business Dynamism) ցուցիչով Հայաստանը զիջում է Ադրբեջանին, Ղազախստանին, Ռուսաստանին, Էստոնիային, Լատվիային և Լիտվային: Հիմնական «մեղավորը» սնանկության գործընթացի արդյունավետությունն է և ձեռնարկատիրական մշակույթի մաս կազմող «Իրավասություն տրամադրելու պատրաստակամությունը» (Willingness to delegate authority): Սնանկության ընթացակարգերի բարելավման և բիզնեսի կրթության ուղղությամբ աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը բխում է նաև վերը քննարկված այլ զեկույցների արդյունքներից, որը նորություն չէ:

Ամփոփում. Հիմնական եզրահանգումը կառավարության երկարաժամկետ տեսլականի և քաղաքականության կայունության ոչ բարձր ցուցանիշների առկայությունն է: **Այս ուղղությամբ իրավիճակը դրական միտում չի արձանագրում, քանի որ կառավարությունն այդպես էլ որևէ փաստաթղթով չի հստակեցնում տնտեսության զարգացման իր տեսլականը:**

Միաժամանակ, զեկույցի որոշ արդյունքներ կրկնում են նախորդ զեկույցների գնահատականները, մասնավորապես՝ սնանկացման գործընթացների անարդյունավետության, ձեռնարկատիրական ունակությունների, էլեկտրոնային մասնակցության ցածր մակարդակի ուղղություններով:

Այլ զեկույցներ

Ս.թ. հոկտեմբերին հայտնի դարձավ, որ Հայաստանը ներառվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) «Օտարերկրյա ուղղակի ներդրումների կարգավորումների սահմանափակման ինդեքսում»: Այն ներառում է ՏՀՀԿ-ի անդամ երկրները և մոտ երեք տասնյակ ոչ անդամ երկրներ: Զեկույցը գնահատում է օտարերկրյա ուղղակի ներդրումներին առնչվող կարգավորումներում առկա սահմանափակումները՝ ներառելով 22 ոլորտ՝ գյուղատնտեսություն, արդյունաբերություն, էլեկտրականություն, մշակող արդյունաբերություն և հիմնական ծառայություններ:

Զեկույցի արդյունքներով Հայաստանը 70 երկրների շարքում զբաղեցնում է 10-րդ հորիզոնականը²⁰, ինչը նշանակում է, որ ներդրումների առումով մեր օրենսդրությունը բավական ազատական է: Իհարկե, ազատական օրենսդրության և ներդրումների

²⁰ <https://stats.oecd.org/Index.aspx?datasetcode=FDIINDEX#>

ներհոսքի միջև կա ուղիղ համեմատական կախվածություն, սակայն միայն օրենսդրությունը չի կարող ապահովել օտարերկրյա ներդրումներ:

Այդ են վկայում նաև ՄԱԿ-ի առևտրի և զարգացման խորհրդաժողովի (UNCTAD) կողմից ս.թ. նոյեմբերին հրապարակված **Ներդրումային քաղաքականության զեկույցում (Investment Policy Review) արված պնդումները**²¹: Ներդրումների և տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտները և առավելությունները ներկայացնելիս նշվում է նաև, որ «խոստումնալից ոլորտների կայուն զարգացումը հնարավոր չէ ապահովել միայն հիմնվելով արդյունավետության առկա ցուցանիշների վրա: Անհրաժեշտ են արդիականացնող ներդրումներ և քաղաքականության գործողություններ: Յուրաքանչյուր թիրախավորված ճյուղի համար մշակված ներդրումների խթանման ռազմավարություն պետք է ունենա ոլորտային քաղաքականության փաթեթ, որը կներառի ոչ միայն հարկային քաղաքականությունը, այլև ներդրումային միջավայրի բարելավման կոնկրետ գործողություններ»:

Այսպիսով՝ օտարերկրյա ներդրումների ներգրավման տեսանկյունից Հայաստանի օրենսդրությունն աշխարհում ամենաազատականներից է, սակայն դա բավարար չէ ներդրումների ներհոսք ապահովելու համար: Անհրաժեշտ է յուրաքանչյուր ճյուղի ներդրումների հստակ տեսլական և դրան համապատասխան կոնկրետ գործողություններ:

Ամփոփում

Միջազգային վարկանիշային զեկույցների արդյունքներով Հայաստանն իր հետ համադրելի երկրների համեմատությամբ առաջատար չէ որևէ զեկույցի ընդհանուր գնահատականով կամ առանձին ցուցիչների մասով: Ընդ որում՝ Հայաստանը բազմաթիվ ցուցիչներով զիջում է նաև իր անմիջական հարևաններին և ԵԱՏՄ անդամ երկրներին: Առկա թույլ տեղերի բարելավման ուղղությամբ հիմնականում աշխատանքներ չեն իրականացվել, կամ ծրագրերը դեռևս մշակման փուլում են:

Ներդրումների ներգրավման օրենսդրության առումով Հայաստանն ունի բարենպաստ կարգավորումներ, սակայն դրանք բավարար չեն օտարերկրյա ներդրումների ներգրավման համար: Անհրաժեշտ են կոնկրետ ոլորտային քաղաքականություններ, սակայն այդպիսիք առայժմ չկան:

21

https://unctad.org/en/PublicationsLibrary/diaepcb2019d3_en.pdf?fbclid=IwAR3s09rLmHwL1XhKDIqseoOcbz9MIpavbiMactAt3WFZQnKIQFpEIQ1WYRg

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իշխող քաղաքական ուժի կողմից տրված խոստումների մասով կարելի է եզրակացնել հետևյալը.

- Ամբողջությամբ իրականացված բարեփոխումները շահութահարկի և եկամտային հարկի դրույքաչափերի իջեցումն են, ԱԱՀ-ի շեմի բարձրացումը և միկրոձեռնարկատիրության հարկման ռեժիմի սահմանումը²²:
- Սնանկության գործընթացների արդյունավետության բարձրացմանն ուղղված օրենսդրական փաթեթը ներկայացված է Ազգային ժողովի քննարկմանը:
- Բյուրոկրատական սահմանափակումների վերացման, թույլտվությունների տրամադրման պարզեցված ընթացակարգերի ներդրմանն ուղղությամբ որևէ առաջընթաց չկա:
- Հարկային քաղաքականությունն անորոշ է և անկանխատեսելի:
- Մաքսային վարչարարությունը բարելավվել է առավելապես կոռուպցիայի կրճատման հաշվին, սակայն ինստիտուցիոնալ մեխանիզմները չեն վերանայվել, ընթացակարգերը չեն պարզեցվել:
- Բիզնեսին ծառայություններ մատուցելու նպատակով «Մեկ կանգառ, մեկ պատուհան» կառույցը չի գործարկվել, իսկ այդ գործառույթները նախկինում իրականացնող կառույցը չի գործում:
- Խոստացված այլ բարեփոխումների մասով առայժմ որևէ արդյունք չի արձանագրվել:
- Միջազգային վարկանիշային զեկույցներում ՀՀ դիրքերի բարելավմանն ուղղությամբ որևէ համակարգված քայլ չի իրականացվել:
- Չնայած կառավարության կողմից տարբեր զեկույցներում ՀՀ դիրքի կարևորմանը՝ ՀՀ գործարար միջավայրի բարելավմանն ռազմավարության նախագծով թիրախավորվում է միայն «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցը:

²² Վերջին երկու բարեփոխումներին առավել մանրամասն անդրադարձ է կատարվել «ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության համեմատական վերլուծությունում»:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ 01.11.2019Թ. ԹԻՎ 07/10693-2019 ԳՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 07/10693-2019

«___» _____ 2019թ

Ձեր № ԱԿ-046/Ն
09.10.2019թ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Կարապետյան,

Ի պատասխան Ձեր գրության, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը ներկայացնում է ներքոհիշյալ տեղեկատվությունը

2018-2019 թվականներին Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի (ներկայիս «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ) մարզային մասնաճյուղերի կողմից մատուցվող ծառայություններ (միջոցառումներ)

1) ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)

Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն և ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն/ թեմատիկ և ոլորտային դասընթացներ

2) ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

Իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների հաշվետվությունների ներկայացման և այլ ուղղություններով աջակցություն:

3) Սկսնակ գործարարների և ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն

4) Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսների աջակցություն

5) Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում

Ինչ վերաբերում է հիմնադրամի կողմից իրականացվող միջոցառումների կատարմանը, այդ թվում նաև ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշման Հավելվածի N 1-ի 239-րդ կետով նախատեսված, ապա հայտնում ենք որ նշվածի

վերաբերյալ առավել մանրամասն կարող եք ծանոթանալ հիմնադրամի պաշտոնական կայքի՝ «Կորպորատիվ կառավարում» բաժնի «Հաշվետվություն» ենթաբաժնում՝ հետևյալ հղումով <https://www.smednc.am/hy/files>:

2018 և 2019 թվականներին Հայաստանի ՓՄՁ ՀԱԿ հիմնադրամի մարզային մասնաճյուղերում աշխատողների թվաքանակ

2018 թվականին Հայաստանի ՓՄՁ ՀԱԿ հիմնադրամի մարզային մասնաճյուղերում աշխատողների թվաքանակը կազմել է 22, իսկ 2019 թվականին՝ 10 աշխատող:

2018 և 2019 թվականներին ՓՄՁ ՀԱԿ-ի մարզային մասնաճյուղերի ֆինանսավորման փոփոխություններ

Նշված ժամանակահատվածում հիմնադրամի (այդ թվում նաև մարզային կառույցների) պետական աջակցության ծրագրերի ֆինանսավորումը փոփոխության չի ենթարկվել:

Միաժամանակ ներկայացնում ենք նաև ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների» 240-245 և 250-րդ կետերի կատարման ընթացքի վերաբերյալ Ձեր կողմից տեղեկատվությունը

		240.1	240.2 կետ
240 կետ	ՓՄՁ ոլորտում խոչընդոտների վերացում՝ ձեռնարկատիրական մշակույթի զարգացման, նպաստավոր օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի կայացման, ՓՄՁ կարողությունների զարգացման ճանապարհով ՓՄՁ խոշորացման խթանների համակարգի զարգացում	Մշակվել և ներկայումս սահմանված կարգով շրջանառվում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը աշխատանքային կարգով քննարկվել է մի շարք գերատեսչությունների և միջազգային և ՓՄՁ շահերը ներկայացնող ՀԿ-երի, ՓՄՁ աջակցության ծրագրեր իրականացնող մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ՝ բոլոր շահառուների կարիքների արտացոլման և տարբեր ծրագրերի միջև սիներգիայի ապահովման համար: Նախագիծը հանրային քննարկման նպատակով 08/10/2019-23/10/2019 ժամկետներում տեղադրվել է նաև իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում հետևյալ հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/1986/about :	Միջոցառումը գտնվում է կատարման փուլում: Հարցի շուրջ քննարկումներ են իրականացվել, այդ թվում նաև ՓՄՁ զարգացման խորհրդի ենթախորհրդի նիստին, ՓՄՁ զարգացման խորհրդի և ենթախորհրդի ձևաչափի և կազմի փոփոխության վերաբերյալ՝ Խորհուրդը և ենթախորհուրդը ՓՄՁ և խոշոր կազմակերպությունների համագործակցության հնարավորությունների բացահայտման և դրանց խորացման համար որպես հարթակ ձևավորվելու համար:

241	Մասնավոր հատվածում Արտադրողականության բարձրացմանն ուղղված ծրագրային նախաձեռնություններ ի խրախուսում	241.1 Ներկայումս վերջնականացման փուլում է գտնվում թեթև արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին բարձրորակ կադրեր և տեխնոլոգիաներ ապահովող ծառայությունների կենտրոնի գործարկման աշխատանքները	
242	Տեխնոլոգիական վերգինման ուղղությամբ մասնավոր հատվածի ծրագրերը խթանող գործիքակազմի կիրառում	242.1 Մշակվել և սահմանված կարգով շրջանառվում է «Արդյունաբերության զարգացման հնգամյա ռազմավարությանը» հաստատելու մասին ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որի նպատակն է խթանել առավել բարձր ավելացված արժեք ստեղծող արտադրանք (գիտատար, նորարարական), ինչպես նաև արտահանման տեսանկյունից առավել հեշտ լոգիստիկա ունեցող ճյուղերի զարգացմանը: Միաժամանակ նշված նախագիծը հանրային քննարկման նպատակով 17.10.2019-2020.11.2019 ժամկետներում տեղադրվել է նաև իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում հետևյալ հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/2006/about :	
243	Մասնավոր հատվածում կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառության խրախուսում և այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերի առաջխաղացմանն աջակցություն	243.1 Մշակվել և սահմանված կարգով շրջանառվում է «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1769-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը հանրային քննարկման նպատակով տեղադրվել է նաև իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ e-draft.am համակարգում հետևյալ հղումով https://www.e-draft.am/projects/2015 : Նախագծով առաջարկվում է փոփոխել կորպորատիվ կառավարման կանոնագիրքը ամբողջությամբ, ինչպես նաև սահմանել կորպորատիվ կառավարման գնահատման թերթիկը, կորպորատիվ կառավարման ուղեցույցը և գնահատման չափորոշիչները՝ թափանցիկության, վստահության, բարեվարքության և հաշվետվողականության միջավայրի ձևավորման միջոցով տնտեսություն երկարաժամկետ ներդրումների ներգրավմանը աջակցելու, գործարար հատվածի	243.2 Քանի որ տվյալ կետի կատարումը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների» 243.1 կետից, նշվածով պայմանավորված այն կիրականացվի «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1769-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումից հետո:

		կայունությունը ապահովելու, տնտեսական աճը խթանելու, ինչպես նաև տնտեսական որոշումների կայացման գործընթացում հանրության ներգրավվածությունը ապահովելու նպատակով:	
244	Կարգավորիչ արդյունավետ մեխանիզմների գործարկման միջոցով տնտեսական մրցակցության պաշտպանության ապահովում	244.1 կետ Միջոցառումը գտնվում է կատարման փուլում: Վերջինիս ամբողջական և ընդգրկուն կատարման նպատակով իրականացվել է ՀՀ-ում առկա լիցենզիաների և թույլտվությունների գույքագրում, ինչպես նաև կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Նախատեսվում է իրականացնել վերջիններիս տրամադրման իրավական հիմքերի վերլուծություն: և սահմանված ժամկետում կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:	
245	Ապրանքների և ծառայությունների շուկաներում նոր մասնակիցների մուտքի և առաջ-խաղացման խրախուսում՝ այդ թվում, պետության կողմից սահմանված ինստիտուցիոնալ կամ այլ տնտեսական արգելքների կամ սահմանափակումն ² թվաքանակի կրճատման միջոցով	245.1 և 245 ² Միջոցառումները գտնվում են կատարման փուլում: Մասնավորապես, աշխատանքներ են իրականացվում ժամանակակից շուկայական պայմաններին համապատասխան ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի իրականացման իրավական կարգավորման ապահովման, ինչպես նաև երրորդ երկրներից ՀՀ ներմուծման և արտահանման քվոտաների համակարգի ընթացակարգերը սահմանող ՀՀ կառավարության որոշումների նախագծերի մշակման ուղղությամբ:	
250	Արտահանմանն առնչվող մաքսային ընթացակարգերի և դրանցով պայմանավորված վարչարարության պարզեցում	250.1 Վերահսկվող ապրանքներ արտահանող սուբյեկտների համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել նախագիծ, որով առաջարկվում է ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 765-Ն որոշումը մի շարք դրույթներով, որի արդյունքում կպարզեցվի ընթացակարգը: Մասնավորապես՝ արտահանող սուբյեկտը (կամ մաքսային գործակալը) կարող է էլեկտրոնային փոստի միջոցով դիմել փորձագիտական կազմակերպությանը և երկու աշխատանքային ժամվա ընթացքում ստանալ պատասխան՝ արտահանվող ապրանքը հսկվող ապրանքների ցանկում առկա է թե՛ ոչ:	

Հարգանքով՝

 Recoverable Signature

X 

Նաիրա Մարգարյան
Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Signed by: MARGARYAN NAIRA 6707830182

ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կատարող՝

Ձեռնեղենության զարգացման վարչության գլխավոր մասնագետ, Հոփսիմե Հովհաննիսյան
011597136

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ 16.10.2019Թ. ԹԻՎ ԳԳ-2260 ԳՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Միեր Մկրտչյան 5^թ, հեռ.՝ (+374 10) 54 19 00,
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

« 16 » 10 20 19թ.
No ԳԳ - 2260

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ
(ՀՀ, ք. Երևան, Շինարարների փողոց 28/2, գրասենյակ 80)

Հարգելի պարոն Կարապետյան,

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը, Ձեր՝ 2019 թվականի հոկտեմբերի 11-ի տեղեկատվության հարցման դիմումի (այսուհետ՝ Դիմում) վերաբերյալ հայտնում է հետևյալը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) 2011 թվականի ապրիլի 12-ի թիվ ՀՕ-137-Ն օրենքով կատարված փոփոխություններով ուժը կորցրած է ճանաչվել տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված ռեեստր (գրանցամատյան) վարելու պահանջ նախատեսող դրույթը, իսկ Օրենքում 2018 թվականի մարտի 23-ի թիվ ՀՕ-249-Ն օրենքով կատարված փոփոխություններով ուժը կորցրած է ճանաչվել Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի այն կարգավորումը, համաձայն որի՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող է համարվում Հանձնաժողովի որոշմամբ: Հետևաբար Հանձնաժողովը տնտեսվարող սուբյեկտների մենաշնորհի կամ գերիշխող դիրքի առկայության, ապրանքային շուկաների հատկորոշման, գերիշխող դիրքի չարաշահման, տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքների գների բարձրացման, իջեցման կամ պահպանման միջոցով տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների հարցը պարզում է կոնկրետ գործերի ուսումնասիրության և քննարկման շրջանակներում՝ դրանց արդյունքում


ընդունվող որոշումներով: Հանձնաժողովի բոլոր որոշումները տեղադրված են Հանձնաժողովի պաշտոնական կայքում (<http://competition.am/index.php?menu=149&lng=1>):
Բացի այդ, Դիմումում նշված հարցերին առնչվող տեղեկատվություն հրապարակված է նաև Հանձնաժողովի կայքում տեղադրված Հանձնաժողովի տարեկան հաշվետվություններում և տարեկան գործունեության ծրագրերում (<http://competition.am/index.php?menu=154&lng=1>, <http://competition.am/index.php?menu=153&lng=1>):

Գրեմ

ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Իրավաբանական վարչություն,
Կատ.՝ Հ. Տիգրանյան, հեռ. 010 541900 (314)

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ



Աղբյուր՝ Global Entrepreneurship Index 2018

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: